

ՅՈՒՐԻ ՎԵՍԵԼՈՎՍԿԻՆ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Յու. Վեսելովսկի, Մոսկվա, Լազարյան ճեմարան, Հայ իրականություն, Մ. Բերբերյան, Վենետիկի և Վիեննայի միսիթարյան միաբանություններ, Նոր-Նախիջևան, Հայոց պատմություն, Հայ-ուսական գրական կապեր, Թատրոն և Թատերագիրներ, Ս. Շահազիզ, Ա. Ծատուրյան, Թարգմանություններ, Հոբելյանական հանդես, դասախոսություն, Բաքու, «Армянский ВЕСТНИК».

Նախաբան

XIX դարավերջի և XX դարասկզբի ուսուցիչականների ու գրողների միջավայրում հազվագեղ էին այնպիսիք, ովքեր լրջորեն հետաքրքրվել են իրենց հետ միևնույն երկրում ապրող փոքր ժողովուրդների պատմությամբ, մշակույթով ու գրականությամբ: Այնինչ, նրանք հաճախ ավելի լավ գիտեին եվրոպական արվեստն ու գրականությունը, քան, երբեմն, հենց իրենք՝ եվրոպացիները: Անշուշտ, այդ առումով կային բացառություններ. այսպես, եթե խոսքը գնում է Հայ ժողովրդի մասին, ապա դա առաջին հերթին վերաբերում է Յուրի Վեսելովսկուն, Մաքսիմ Գորկուն և Վալերի Բրյուսովին:



Հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, գրականությանը խոր և համակողմանի տիրապետում էր Վեսելովսկիների նշանավոր ընտանիքի վերջին ներկայացուցիչ, անվանի գիտնական-գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ, հայագետ Յուրի Վեսելովսկին¹: Նա քաջ գիտակցում էր,

* Ներկայացվել է 16. V. 2022 թ., գրախոսվել է 30. V. 2022 թ., ընդունվել է տպագրության 06. VI. 2022 թ.:

¹ Տե՛ս Շահ-Նազարեանց. 1901, Ավետիսյան. 1943, 89–93, Арешян. 1944, 75–108; Նանուժյան. 1945, 29–33, Արեշյան. 1946, Оганисян. 1952; Арешян. 1957, 313–329; Գրիգորյան. 1959, 7–35, Հովնանյան. 1961, 91–99, 152, 344–345, Ղուկասյան. 1961, 15–35, Давтян. 1965, 37–46; Давтян. 1967, № 3, 102–108; Давтян. 1967; Давтян. 1970; Веселовский. 1972; Հայ գրականության միջազգային կապերը. 1983, 11–20, 27–32, Հայկական սովետական հանրագիտարան. 1985, 380, Гана-

որ ուռա հասարակությունը որքան մոտիկից ճանաչի հայերին, այնքան ավելի արդարացի ու ճշմարտացի կլինի նրա վերաբերմունքը բազմաչարչար ժողովրդի նկատմամբ: Այդ իսկ նկատառումով մեծ մարդասերն անհրաժեշտ էր համարում ուռա հասարակությանը ծանոթացնել հայ ժողովրդի դարավոր պատմությանը, ժամանակակից իրականությանն ու հասարակական կյանքին, մշակութային հարուստ ժառանգությանը: Այդ բնագավառներում կատարած նրա ուսումնասիրություններն արժեքավոր ներդրում են Ռուսաստանում հայագիտության զարգացման գործում²:

Յուրի Վեսելովսկու կյանքի ուղին

Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, համաշխարհային գրականության տաղանդավոր հետազոտող, բազմաթիվ հոդվածների և ուսումնասիրությունների հեղինակ Ալեքսեյ Նիկոլաևիչի ու թարգմանչուհի Ալեքսանդրա Ադոլֆովնա Վեսելովսկիների որդի և ակադեմիկոս Ալեքսանդր Նիկոլաևիչ Վեսելովսկու եղբորորդի Յուրի Ալեքսեևիչ Վեսելովսկին ծնվել է Մոսկվայում 1872 թ. հուլիսի 6-ին: Նախնական կրթությունը ստանալով տանը՝ 1886 թ. ընդունվում է Լազարյան ճեմարանի գիմնազիական բաժնի հինգերորդ դասարան: Նկատենք, որ ճեմարանի հիմնական նպատակն էր՝ «... հայերի համար լինել կրթության ազգային կանթեղ, Ռուսաստանում լինել արևելյան լեզվաբանության օջախ, բոլորի համար դառնալ հանրակրթական դպրոց»³:

Ընտանիքի հոգևոր բարենպաստ մթնոլորտը, ինտելեկտուալ չրջապատը դարձան ապագա գիտնականի ու գրականագետի ձևավորման համար որոշիչ գործոններ: Յուր. Վեսելովսկու գիտական հետաքրքրությունների վրա մեծ է եղել նաև գիմնազիական միջավայրի ազդեցությունը: Այստեղ նրա հետաքրքրությունն առանձնապես գրավում են պատմությունը, աշխարհագրությունը, ուռա գրականությունը, ֆրանսերենը և մասամբ՝ հին-կլասիկ լեզուները: Իբրև ազատ ունկնդիր՝ հաճախել է Սմբատ Շահազիզի հայոց լեզվի դասերին: Իր դասարանական ընկերների օգնությամբ շատ շուտ սովորեց նաև հայերեն այբուբենը, ապա սկսեց բավական ազատ հայերեն կարդալ ու գրել: Նրա ուշադրությունը հատկապես գրավում են հայոց գրականությունն ու պատմությունը. սկսում է ուսումնասիրել հայ գրողների գործերը՝ օգտվելով Մ. Էմինի և Բ. Պատկանյանի թարգմանություններից:

Նոր-Նախիջևանում գտնվող իր համադասարանցի և մտերիմ ընկերոջը, իսկ հետագայում՝ հայ գրական-հասարակական նշանավոր գործիչ Մինաս Բերբերյանին 1887 թ. հունիսի 11-ին Օկայի ամիսներձ Պետրովսկոյե գյուղից գրած նամակում Յուր. Վեսելովսկին հայտնում է. «Սկսել եմ նորից զբաղվել հայոց լեզվով, բայց առանց աջակցության ինչ-որ չի ստացվում: Աշնանից կսկսեմ պարապել այնպես, ինչպես քեզ ասել եմ. գործնականորեն: ... հայոց լեզվի և

ланиян. 1988, 25–33; Акопян. 1988; Հանրագիտական բառարան. 2018, 932 և այլն:

² Հոդվածում հանգամանորեն չենք անդրադառնում Յուր. Վեսելովսկու պատմաքննական և թարգմանական աշխատանքներին, քանի որ դրանք ժամանակին մանրամասն վերլուծվել են. տե՛ս ծանոթ. 1-ում նշված գրականությունը:

³ 1815–1890. Семидесятипятилетие Лазаревского института восточных языков. Исторический очерк и приложения Г. И. Кананова. 1891, 3.

պատմության վերաբերյալ գրքեր հետս վերցրել եմ: Հիշիր, խնդրում եմ, խնդրանքս. եթե ձեր տանը կլինեն Հայաստանին վերաբերող գրքեր, ինչպես նաև նոտաներ, հետդ բեր»⁴:

Յու. Վեսելովսկին իր գրական գործունեությունը սկսել է իբրև բանաստեղծ: Նա առաջին ուսուցիչն էր, ով, բանաստեղծական առաջին փորձերը կատարելով դպրոցական տարիներին, դրանք նվիրել է հեռավոր երկրին՝ Հայաստանին ու Հայերին: Այսպես, 1887 թ. օգոստոսի 27-ին վերը նշված գյուղից դարձյալ Մ. Բերբերյանին գրած նամակում հայտնում է. «Ես ինձ հետ Մոսկվա եմ բերում 10 նոր բանաստեղծություն».

- 1) «Հանուն Հայրենիքի», բալլադ թուրքերի դեմ հայերի պայքարից,
- 2) «Ծեր հայր փոքրիկ որդուն»,
- 3) «Գիշերը Արաքսի ափին»,
- 4) «Կալանավորի երգը»,
- 5) «Լևոն VI» (նվիրվում է Գ. Կ. Թոմասյանցին),
- 6) «Գիշերը Վանա լճի ափին»,
- 7) «Ճանաչո՞ւմ ես այն երկիրը» (նվիրվում է Մ. Բերբերյանցին),
- 8) «Վանականի վաղորդյան երգը»,
- 9) «Եվրոպացիները հայերին»,
- 10) «Զեյթունի ռազմական երգ»:

Հանդիպման ժամանակ դրանք կկարդամ քեզ համար»⁵:

1887–1888 թթ. Լազարյան ճամարանում հրատարակվում էր հայ աշակերտության օրգան «Գործ» ձեռագիր շաբաթաթերթը, հետո՝ ամսաթերթը: Այլոց շարքում դրա հիմնական աշխատակիցներն են եղել Մ. Բերբերյանը, իբրև գրական քննադատ, և Յու. Վեսելովսկին՝ որպես թարգմանիչ: «Գործ»-ի նպատակն է եղել՝ հայ երիտասարդության մեջ սեր արթնացնել դեպի հայրենիքը, նրա պատմական անցյալը, նրա մեջ սերմանել ազգային-հասարակական հետաքրքրություն: Ամսաթերթի էջերում տեղ են գտել նաև Յու. Վեսելովսկու վերը նշված բանաստեղծությունները: Դրանք հայ ժողովրդի անցյալի ու ներկայի նկատմամբ ուսուցանող խոր համակրանքի և սիրո ջերմ արտահայտություններ են, հայասիրության վառ վկայություններ⁶:

Ուշագրավ է, որ Յու. Վեսելովսկին իր ազգանունը կատակով ստորագրում էր՝ Գևորգ Ուրախյանց:

Դեռ աշակերտ եղած ժամանակ՝ 1889 թ. օգոստոս–սեպտեմբերին, Յու. Վեսելովսկին ծնողների հետ լինում է արտասահմանում, ուր այցելում է Մխիթարյանների վանքերը Վենետիկում և Վիեննայում, չփվում միաբանության անդամների հետ: Ստացած տպավորությունները հետագայում ներկայացրել է «Բայրոնը սբ. Ղազար կղզում» ակնարկում: Ի դեպ, Յու. Վեսելովսկին արտասահմանում եղել է չորս անգամ, ընդ որում երկու անգամ՝ մանկության օրերին:

⁴ Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Մ. Բերբերյանի ֆ., № 272:

⁵ ԳԱԹ, Մ. Բերբերյանի ֆ., № 273:

⁶ Ավետիսյան. 1943, 89–93: Ի դեպ, հրապարակման նախաբանում էջ 90-ում, նշվում է, որ հրատարակվում է Յու. Վեսելովսկու վերը նշված ոտանավորներից չորսը, սակայն իրականում տպագրվել է հինգը (տե՛ս էջ 91–93):

1890 թ. Յու. Վեսելովսկին մեղադրվում է գիմնազիական դասընթացը և ընդունվում Մոսկվայի Համալսարանի պատմաբանասիրական բաժինը, հաճախում է ուսուցիչ արևմտահայերենի և գրականության, պատմության, փիլիսոփայության վերաբերյալ դասախոսություններին: Համալսարանում իր ընտրած բաժնի դասընթացը լսելուց հետո՝ 1894–1895 թթ., իբրև ազատ ունկնդիր, հաճախում է անգլիական գրականության հայտնի մասնագետ, Ռուսական բանահյուսություն սիրողների ընկերության նախագահ, պրոֆ. Ն. Ի. Ստորոժենկոյի և իր հոր դասախոսություններին՝ արևմտահայերենի գրականությունն առավել հիմնավոր ուսումնասիրելու համար:

1892 թ. ամռանը Յու. Վեսելովսկին ուղևորվում է Անդրկովկաս, սակայն տարածված խոլերայի պատճառով կանգ է առնում Նոր-Նախիջևանում⁷ հյուրընկալվելով Բերբերյանների սրտաբաց ընտանիքում: Մի քանի շաբաթվա ընթացքում ուսումնասիրում է նախիջևանահայերի պատմական անցյալը, նիստուկացը, բարբերը, ականատես է լինում Վարդավառի տոնակատարությանը, այցելում է մշակութային և կրթական հիմնարկությունները՝ թատրոն, դպրոցներ, Մայր եկեղեցի, Սուրբ Խաչ վանք, Մ. Նալբանդյանի չիրմին: Այդ ուղևորությունից ստացած տպավորությունները նա գեղարվեստորեն ներկայացրել է «Մի հայկական անկյուն հարավային Ռուսաստանում (ուսուցիչի ուղևորի հիշողություններից)» ակնարկում⁸:

1890-ական թվականների սկզբից Յու. Վեսելովսկին բուռն գործունեություն է ծավալում ուսուցչական հասարակայնությանը Հայաստանի պատմությանը, հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային գանձերին ծանոթացնելու ուղղությամբ:

1897 թ. Յու. Վեսելովսկին հանձնում է պետական հանձնաժողովի քննություն, ավարտում համալսարանի դասընթացը՝ արժանանալով առաջին աստիճանի վկայագրի: Այդ նույն թվականին ամուսնանում է Մարիա Վասիլենա Ֆոմինայի հետ, ով բելգիական գրականության ճանաչված թարգմանիչ էր, միաժամանակ զբաղվել է հայ գրականությունից թարգմանություններով:

1898–1899 թթ. Յու. Վեսելովսկին հրապարակային դասախոսություններ է կարդում Ռյազան և Կուրսկ քաղաքներում, 1900 թ.՝ Յարոսլավլում: Ամեն տարի մի քանի շաբաթ անցկացնում է Պետերբուրգում՝ զբաղվելով գրական գործերով: 1898–1899 թթ. նա մասնակցում է Լազարյան ճեմարանի նախկին սաների Ընկերության կանոնադրության վերջնական խմբագրման գործին. Ընկերության առաջին նիստում դառնում է Վարչության փոխանորդ-անդամ: 1899 թ. ընտրվում է մի քանի ընկերությունների՝ «Общество любителей российской словесности» (Մոսկվա), «Союз русских писателей» (Ս. Պետերբուրգ), «Нео-филологическое общество» (Ս. Պետերբուրգ) անդամ: Հետագա տարիներին գրեթե ամբողջովին նվիրվում է գրական-լրագրողական

⁷ Ս. Շահ-Նազարյանը գրում է. «1892–95 թվականներին (ընդգծումը մերն է – Ա. Զ.) երկու-երեք շաբաթ ապրել է Նոր-Նախիջևանում...» (տե՛ս Շահ-Նազարյան. 1901, 7):

⁸ «Русские ведомости» (М.), 04. X. 1892. Ակնարկը թարգմանվել է հայերեն. տե՛ս «Արձագանք» (Թիֆլիս), 11, 14. X. 1892:

աշխատանքին՝ զբաղվելով մերթ ուռւ, արեւմտաեվրոպական, մերթ հայ գրականութեամբ: Միաժամանակ մանկավարժական աշխատանք է կատարում գիմնազիայում և կանանց բարձրագույն դասընթացներում:

... Հայ գրականութեանը մատուցած խոշոր ծառայութեան համար 1900 թ. հունվարի 22-ին Մոսկվայի «Կոնտինենտալ» հյուրանոցում հայ գաղթօջախի անդամները մեծ շուքով նշել են Յու. Վեսելովսկու գրական և հասարակական գործունեութեան տասնամյակը: Կազմակերպիչը եղել է Ա. Ծատուրյանը, որպէս պատվավոր հյուր ներկա է եղել հոբելյարի հայրը՝ պրոֆ. Ա. Վեսելովսկին: Երեկոն բացել է Յու. Վեսելովսկու նախկին ուսուցիչ և ներկաների մեջ «ավագագույնը»՝ Ս. Շահագիրը: Այնուհետև Ա. Ծատուրյանն ընթերցել է շուրջ 40 հեռագրեր՝ ստացված Ռուսաստանի տարբեր վայրերից, հնչել են մեծարման ելույթներ, հոբելյարին տրվել են բազմաթիվ նվերներ: Հանդեսի մասին իր գրքում մանրամասն գրել է միջոցառման մասնակից, բժիշկ, Յու. Վեսելովսկու առաջին կենսագրութեան հեղինակ Սիմեոն Շահ-Նազարյանը⁹, հաղորդումներ են տպագրվել անդրկովկասյան հայ մամուլի էջերում:

Նկատենք, որ հոբելյանական հանդեսին նախորդող ու հաջորդող օրերին, ամիսներին ևս Յու. Վեսելովսկին Ռուսաստանի տարբեր վայրերից, արտասահմանից՝ հայ հասարակական-մտավորական շրջանակներից, ստանում է բազմաթիվ նամակներ ու հեռագրեր, գրվում են նրա գրական-հասարակական գործունեութեան մասին հոգևածներ ու ակնարկներ, որոնցում միաբերան շեշտվում է հայերիս համար նրա կատարած գործի արդյունավետ ու շահավետ լինելը, ըստ ամենայնի, արժեւորվում ու գնահատվում է հայագետի առաքելութիւնը¹⁰:

Նշենք նաև, որ Յու. Վեսելովսկին հունվարի 31-ին մամուլի միջոցով նամակ է հասցեագրել հանրութեանն՝ իր հոբելյանի առթիվ եղած արձագանքների համար: Շնորհակալական խոսքում, մասնավորապէս, ասվում էր. «Հունվարի 22-ն ընդամիշտ թանկագին և հիշատակելի կմնա ինձ համար: Այդպիսի օրեր հաճախ չեն վիճակվում գրական մշակներին, գրչի մարդկանց: Դեպի նվաստացույց տրված այդ սիրաշատ տրամադրութիւնը հայ հասարակութեան կողմից, որի վերաբերմամբ ես միշտ տոգորված եմ եղել անկեղծ և ջերմ համակրանքի զգացումներով, նոր ուժ ու եռանդ է ներշնչում ինձ նաև ապագայում շարունակելու իմ գործունեութիւնը, կարողացածիս չափ ծանոթացնելու ուռւ հասարակութեանը հայ ժողովրդի ցավերի ու կարիքների, նրա քաղաքակրթական հակումների, նրա բուն ազգային բնութքի հետ»¹¹:

Ռուսաստանում հայ գրականութեան առաջին թարգմանիչն ու մասնաշաղկապն էր

Յու. Վեսելովսկու կենսագրութեան հեղինակ Վ. Սավոդնիկը գրում է. «Յուրի Ալեքսեևիչի հետաքրքրութիւնը հայերի նկատմամբ առաջացավ բավական վաղ, զուտ պատահական հանգամանքներում, այն բանի շնորհիվ, որ միջնակարգ կրթութիւնը ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում և իր ընկեր-

⁹ Մանրամասն տե՛ս Շահ-Նազարեանց. 1901, 12–44:

¹⁰ Հանգամանորեն տե՛ս Շահ-Նազարեանց. 1901, 45–67:

¹¹ «Նոր-Դար» (Թիֆլիս), 11. II. 1900:

ներից մեկի միջոցով ծանոթացել մի քանի հայ ընտանիքների հետ: Հետագայում՝ ուսանողական տարիներին, նա սկսեց զբաղվել հայերենով և այնքան տիրապետեց, որ այդ լեզվով խոսում էր միանգամայն ազատ: Ծանոթացավ նաև հին հայերենին՝ գրաբարին, որի ուսումնասիրությունը մեծ դժվարություն է ներկայացնում: Այսպիսի հիմնավոր գիտելիքները նրան հնարավորություն տվեցին հանդես գալ նաև որպես թարգմանիչ ու այդ միջոցով ուսու հասարակությունը ծանոթացնել Հայաստանի մտավոր կյանքի և ստեղծագործության հետ, որոնց մասին ուսու ընթերցողների մեծամասնությունը ոչ մի գաղափար չուներ: Յուրի Ալեքսեևիչը հարստացրեց ուսու գրականությունը մի ամբողջ շարք հայ ականավոր գրողների երկերի թարգմանություններով»¹²:

Յու. Վեսելովսկու գիտական հետաքրքրությունների շրջանակը չափազանց լայն է. այն ընդգրկում է հայագիտության գրեթե բոլոր բնագավառները: Հայաստանին նվիրված նրա ուսումնասիրությունները կարելի է բաժանել չորս խմբի. գրական-քննական ակնարկներ, հրապարակախոսական հոդվածներ, թարգմանություններ և Հայաստանին ու հայ ժողովրդին նվիրված բանաստեղծություններ:

Դեռևս 1890 թ. լինելով Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական բաժնի ուսանող՝ Յու. Վեսելովսկին մտածում էր հայ գրականության ժողովածու հրատարակել՝ այն ուսու հասարակության միջավայրում մասսայականացնելու նպատակով: Այդ գործին նա մասնակից է դարձրել Մ. Բերբերյանին: Եվ, քանի որ ժողովածուն հրատարակության պատրաստելիս վերջինս ապրում էր Նոր-Նախիջևանում, Յու. Վեսելովսկու գլխավոր խորհրդատուներն են դառնում Ա. Ծատուրյանը և Մ. Բարխուդարյանը: Այսպես, 1892 թ. օգոստոսի 7-ին Բերբերյանին գրած նամակում Վեսելովսկին հայտնում է. «... Ծատուրյանի և Բարխուդարյանի հետ երկար քննարկեցինք մեր առաջին հատորի ծրագիրը, որին նրանք հավանություն չտվեցին: Հենց նրանք էլ գտնում են, որ գրողներին չի կարելի ներկայացնել ոչ ժամանակագրական կարգով, հին ու նոր սերունդները միահյուսել ...»¹³: Նկատենք, որ վերջիններիս խորհրդով էլ ժողովածուի նյութերը դասակարգվում են ժամանակագրորեն:

Հայ գրողների ստեղծագործություններից ընտրվել են հատվածներ, ձեռնամուխ եղել դրանց ուսուներեն թարգմանությանը: Ձևավորվել է թարգմանական խումբ, որի կազմում ընդգրկվել են Յու. Վեսելովսկին, Ե. Նեկրասովան¹⁴,

¹² Саводник. 1922, 347. Հմմտ. Գրիգորյան. 1959, 12–13:

¹³ ԳԱԹ, Մ. Բերբերյանի ֆ., № 285, Հայ գրականության միջազգային կապերը. 1983, 13:

¹⁴ 1880–1890-ական թվականներին Ռուսաստանում հայ գրականությունը ուսուներենով թարգմանելու գործում Ե. Նեկրասովան վաստակ ունի: Հայտնի է, որ 1888 թ. օգոստոսին նա եղել է Կովկասում: Մի քանի օր անցկացրել է Թիֆլիսում, ծանոթացել մի շարք հայ գրողների հետ, ականատես եղել ժողովրդական տոնախմբության: Նրա վրա մեծ տպավորություն է թողել հատկապես Բաֆու գերեզմանը: «Աղմուկը և ուրախությունը, – գրում է Նեկրասովան, – չաղոտացրին մոտ ժամանակներում գերեզման իջած սիրելի գրողի հիշատակը: Փարթամ, կենդանի ծաղկեփնջերով էր զարդարված այդ օրը թանկագին գերեզմանը: Այդ ծաղիկները ազգականներից ու բարեկամներից չէր, այլ ժողովրդից: Մեր մեծ գրողների գերեզմանները, կորած ու անհայտ հասարակ ժողովրդի համար, այդ օրը կարող էին նախանձել

Մ. Քանանովը, Յու. Սուրենյանցը, Մ. Բերբերյանը, Օ. Խունունցը, Ա. Խատիսովը և ուրիշներ: Նշենք՝ ժողովածուի նախաբանի հեղինակներ Յու. Վեսելովսկին և Մ. Բերբերյանը դրա վերջում գրել են (1893 թ. ապրիլի 5-ին Մոսկվայում), որ եթե առաջին հատորը հասարակության կողմից ընդունվի, ապա ժամանակի ընթացքում կհրատարակեն երկրորդ հատորը, որտեղ կմտնեն նորագույն հայ արձակագիրների ստեղծագործությունները:

1892 թ. ժողովածուն համարյա պատրաստ էր, և, բնականաբար, ծագում է տպագրության հարցը: Դրա լույս ընծայման պատասխանատվությունը ոչ մի հրատարակչություն չի վերցնում, քանզի երկյուղ ունեին, որ ժողովածուն հասարակության շրջանում հետաքրքրություն չի առաջացնի, չի վաճառվի և կբերի միայն ծախսեր: Ուստի, Յու. Վեսելովսկին որոշում է իր միջոցներով հրատարակել ժողովածուն: «Հայ արձակագիրներ» վերնագրով ժողովածուն 800 օրինակով լույս է տեսնում 1893 թ. ապրիլին՝ առանց գրաքննության նախնական թույլտվության: Գրախանութներում գրքի հայտնվելը մեծ հետաքրքրություն է առաջ բերում արդարացնելով կազմողների հույսերը:

Ժողովածուի նախաբանում գրված էին Բայրոնի, ակադեմիկոս Աբխի, Ֆր. Բոդենշտեդտի, պրոֆ. Հյուբշմանի էպիգրամները՝ հայկական մշակույթի և գրականության համաշխարհային նշանակության մասին: Մեջբերենք Բայրոնի խոսքերը. «Ինչպիսին էլ լինի նրանց (հայերի) ճակատագիրը, ..., ինչ էլ որ նրանց սպասվի ապագայում, նրանց երկիրը միշտ կմնա երկրագնդի ամենահետաքրքիր անկյուններից մեկը»¹⁵:

Ժողովածուում զետեղված էին Խ. Աբովյանի, Պ. Պոռչյանի, Բաֆֆու, Ռ. Պատկանյանի, Հ. Պարոնյանի, Ծերենցի, Ղ. Աղայանի ստեղծագործություններից ընտրված նմուշներ ու նաև այդ հեղինակների կյանքին և գործունեությանը նվիրված ակնարկներ: Աբովյանի ստեղծագործություններից ընտրվել էր «Վերք Հայաստանի» վեպից մի հատված, Պոռչյանից՝ «Սոս և Վարդիթեր» ու «Հացի խնդիր» վեպերից առանձին գլուխներ: Բաֆֆու վիպակներից ու պատմվածքներից բացի՝ տեղ էին գտել նաև ընդարձակ հատվածներ «Սամվել» ու «Կայծեր» վեպերից: Պատկանյանը ներկայացված էր իր արձակի նմուշներով, Պարոնյանը՝ «Մեծապատիվ մուրացկաններից» մի հատվածով, Ծերենցը՝ «Երկունք Թ դարու», «Թորոս Լևոնի» պատմավեպերով: Աղայանից տպագրվել էին «Անահիտը», «Այծատուր», «Մանուկ-խան» հեքիաթները,

Բաֆֆուն, նրա երջանիկ բախտին (ընդգծումը մերն է՝ Ա. Զ.)»: 1888 թ. դեկտեմբերի 11-ին Մոսկվայի համալսարանի դահլիճներից մեկում, Ռուսական բանահյուսություն սիրողների ընկերության հերթական ժողովում Ե. Նեկրասովան հանդես է եկել «Հայ նոր գրականությունը. Սունդուկյանի «Քանդած օջախ» կատակերգությունը: Գրող Բաֆֆին» թեմայով դասախոսությամբ: 1892 թ. նա «Мир божий» պարբերականում ակնարկ է տպագրում Բաֆֆու մասին (տե՛ս Некрасова. 1892, 1–14): Նեկրասովայի գրչին են պատկանում երեք թարգմանություններ Բաֆֆուց՝ «Խնաս-փուշ», «Հարեմ» և «Բիբի-շարաբանի. էտյուդ Պարսկաստանի կրակապաշտների կյանքից»: Այս թարգմանությունները նա կատարել է Աբգար Հովհաննիսյանի «Armenische Bibliothek» Լայպցիգի գերմանական հրատարակությունից (Веселовский. 1916, № 4, 21 февраля, 9): Վերը շարադրվածի մասին տե՛ս նաև՝ Գրիգորյան. 1959, 7–10, Ղուկասյան. 1961, 14:

¹⁵ Армянские беллетристы. 1893, V.

նաև՝ «Հարություն և Մանվել» վեպից մի գլուխ և այլն:

Ժողովածուի երևան գալը ոչ միայն գրական-մշակութային, այլև հասարակական հնչեղություն ունեցող կարևոր երևույթ էր: Ռուսաստանի առաջադեմ մտավորականությունը ողջունեց ժողովածուի հրատարակությունը. ռուս և հայ մամուլն արձագանքեց բազմաթիվ հոդվածներով ու գրախոսականներով, որոնք տպագրվեցին «Русские ведомости», «Русский листок», «Русская мысль», «Новое обозрение», «Неделя», «Նոր-Դար» և մամուլի այլ օրգաններում: Գրախոսականներից մեկում ասվում էր. «Մինչև հիմա ռուսներին, ոչ միայն կրթված մարդկանց, այլ նաև գիտնականներին, եթե նրանք հատկապես չեն զբաղվել հայ գրականությամբ, գրեթե ոչինչ հայտնի չէր նման գրականության գոյության մասին և շատ քիչ էր հայտնի հայ ժողովրդի մասին ... Պապուկանների և Կենտրոնական Աֆրիկայի բնակչության մասին մենք ավելի շատ գիտենք, քան նույն հավատի (կամ գրեթե նույն հավատի) մեծատաղանդ և կուլտուրական ժողովրդի մասին, որի մի երրորդն ապրում է Ռուսաստանի սահմաններում»¹⁶:

Բազմաթիվ արձագանքներից ուշագրավ էր ռուս գրականագետ, ակադեմիկոս Ա. Պրպինի բովանդակային ու ընդարձակ գրախոսականը «Вестник Европы» ամսագրի 1893 թ. սեպտեմբերյան համարում: Գրականագիտական մի քանի ընդհանուր բնույթի հարցեր շոշափելուց հետո հեղինակն անդրադառնում է ժողովածուի բովանդակությանը՝ նշելով, որ կազմողները սիրով են մոտեցել ձեռնարկված գործին և հաջողությամբ ստեղծել մի գիրք, որը տալիս է «հայ նոր գրականության զարգացման համոզիչ պատկերը»¹⁷:

Ինչպես հայտնի է, առաջին գիրքը, որի միջոցով ռուս խոշորագույն գրող Լև Տոլստոյը ծանոթացել է հայ գրականությանը, եղել է «Հայ արձակագիրներ» ժողովածուն: Դրա մեկ օրինակը 1893 թ. կազմողներն ուղարկում են նրան և որոշ ժամանակ անց Մոսկվայում ներկայանում են՝ լսելու նրա կարծիքը հայ գրականության մասին: Տոլստոյն ընդունում է նրանց և երկար զրույց վարում. նկատում է՝ ժողովածուում գետեղված հատվածներն ամբողջական պատկերացում չեն կարող տալ հայ գրողների ստեղծագործությունների մասին, բայց առանձին կտորներ, այնուամենայնիվ, բավական ուշագրավ են, և այդ կապակցությամբ հարցումներ է անում Բաֆֆու ստեղծագործությունների մասին, հետաքրքրվում է՝ չկա՞ն արդյոք նրա խոշոր գործերի ռուսերեն առանձին հրատարակություններ: Նաև հետաքրքրվում է հայ ժողովրդի վիճակով, նրա տնտեսական կեցությամբ ու հարևան ազգությունների հետ ունեցած հարաբերությունների հարցերով¹⁸:

Ժողովածուի առաջին հատորի ջերմ ընդունելությունից ոգևորված հրատարակիչները ձեռնամուխ են լինում դրա երկրորդ հատորի կազմմանը: Կրկին օգնության է հասնում Ա. Ծատուրյանը: 1893 թ. Մ. Բերբերյանին գրած նամակում Յու. Վեսելովսկին հայտնում է. «Ծատուրյանը ինձ շատ է օգնում բանաստեղծական և դրամատիկական բաժինների աշխատանքներում: Մեր

¹⁶ «Русская мысль» (М.), 1893, № 7, 302–303.

¹⁷ «Вестник Европы» (Петербург), 1893, 388. Ա. Պրպինի հոդվածի մասին մանրամասն տե՛ս Գրիգորյան. 1959, 18–27:

¹⁸ Տե՛ս Հոփնան. 1961, 152:

իսկ խնդրանքով, նա մեզ մոտ (Պետրովի ամառանոցում) ապրեց հունիսի 17-ից մինչև 27-ը, ... մենք նրա հետ աշխատեցինք: Առաջին հերթին, «Պեպոյից» ամբողջությամբ թարգմանեցինք առաջին գործողությունն ու սկսեցինք երկրորդը, և ապա՝ գործող անձանց բնութագրերը: Թարգմանությունները կարդացինք հայրիկին, որը թե՛ բովանդակության և թե՛ չափի տեսակետից տվեց իր հավանությունը: Այնուհետև, թե՛ ինձ և թե՛ ուրիշ տարբեր թարգմանիչների համար կատարեցինք մի շարք ընդունված բանաստեղծների տողացի թարգմանությունները: Վերջապես, Ծատուրը բանաստեղծությունների մի հսկա ցուցակ կազմեց, որոնք, իհարկե, ցանկալի կլինեին թարգմանել»¹⁹:

Ժողովածուն վերնագրվում է՝ «Հայ արձակագիրներ, դրամատուրգներ և բանաստեղծներ», որտեղ արձակի հետ (Շիրվանզադե, Նար-Դոս, Փափազյան, Լեո) ներկայացված էին նաև դրամատուրգի (Սունդուկյան) ու պոեզիան (Պատկանյան, Շահագիր, Պեյրիթաշյան, Դուրյան, Հովհաննիսյան, Ծատուրյան, Թումանյան, Լեոնեց): Յուրաքանչյուր հեղինակի գործերին նախորդում էր նրա մասին քննական-կենսագրական ակնարկ: Բացի այդ, «Դրամա» բաժնում զետեղված էր Վեսելովսկու «Մի քանի խոսք հայ թատրոնի մասին» ընդարձակ ակնարկը, իսկ «Բնարական պոեզիա» բաժնում Մ. Բերբերյանի նյութը՝ «Նորագույն Հայ բանաստեղծների նախակարապետները» վերնագրով: Ժողովածուի նկարչական ինքնատիպ ձևավորումը կատարել էր անվանի նկարիչ Վարդգես Սուրենյանցը²⁰:

Սակայն ժողովածուի երկրորդ հատորը չհասավ ընթերցողին: Նրա ճակատագիրը 1894 թ. որոշեց գրաքննությունը. երկրորդ հատորը տպագրվել էր 1200 օրինակ՝ առանց գրաքննության նախնական թույլտվության: Տպաքանակը մայիսի 31-ին բռնագրավվեց և ոչնչացվեց, սակայն, այնուամենայնիվ, մի քանի օրինակ հնարավոր է եղել փրկել: Չմանրամասնելով²¹ նշենք, որ դա ցարական իշխանությունների՝ Հայ ժողովրդի հանդեպ ազգահալած քաղաքականության արտահայտություններից էր²²: Ի դեպ, ժողովածուի նյութերի մի մասը հետագայում լույս է տեսել ուսսական պարբերական մամուլի էջերում, ինչպես և՛ առանձին հրատարակություններում:

Ժողովածուի երկրորդ հատորի հետ կապված ցավալի պատմությունը չընկճեց Յու. Վեսելովսկուն. նա եռանդով շարունակեց թարգմանել ու մասսայականացնել Հայ գրականությունը, մասնավորապես՝ Ս. Շահագիր, Ռ. Պատկանյանի, Ա. Ծատուրյանի և ուրիշների գործերից հատվածներ: 1896 թ. մարտի վերջին տպագրվեց Գ. Սունդուկյանի «Պեպո»-ն, որը Վեսելովսկին թարգմանել էր Ծատուրյանի հետ:

¹⁹ ԳԱԹ, Մ. Բերբերյանի ֆ., № 292, Հայ գրականության միջազգային կապերը. 1983, 14–15:

²⁰ Ժողովածուների՝ առաջին և երկրորդ հատորների մասին հանգամանորեն տե՛ս Давтян. 1970, 35–54.

²¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Арешян. 1957, 316–318, 409–419; Գրիգորյան. 1959, 18–27, Давтян. 1970, 49–54.

²² Հավելենք. ինչպես նկատել է Յու. Վեսելովսկու հայրը՝ Ալեքսեյ Վեսելովսկին, դա նաև հետևանք էր՝ «... туркофильских соображений высшей политики» («Армянский вестник» (М.), 1916, № 31, 28 августа, 3).



«Հայ արձակագիրներ, դրամատուրգներ և բանաստեղծներ»
Հատորի շապիկը: Գործ՝ Վ. Սուրենյանցի:

Յու. Վեսելովսկու քննական ակնարկ-հոդվածներն ու ժողովածուներն ընդհանուր առմամբ հայ գրականության մասին

Հարկ է ասել, որ Յու. Վեսելովսկին միշտ հնարավորություն էր գտնում ուսումնասիրության լայն շրջանակներին հայ մշակույթի ժառանգությանը ծանոթացնելու համար: Այսպես, նա դիմում է Բրուկհաուզի և Եֆրոնի «Հանրագիտական բառարանի» խմբագրությանը՝ առաջարկելով հոդվածներ տպագրել հայ նորագույն ու հին գրականությունների, նաև՝ Հայաստանի պատմության վերաբերյալ: Դրական պատասխան ստանալով բառարանի գրականության բաժնի վարիչ Ս. Վենգերովից՝ 1896–1899 թթ. այդտեղ զետեղում է ութ հոդված. «Խրիմյան», «Մխիթարը և մխիթարյանները», «Նազարյանց», «Նալբանդյան», «Հակոբ Պարոնյան», «Ռաֆայել Պատկանյան», «Պոռչյան» և «Րաֆֆի»:

Ինչպես նկատվել է, որպես գրականագետ և բանասեր Յու. Վեսելովսկին կրել է հոր և հորեղբոր՝ պատմահամեմատական գրականագիտության խոշոր ներկայացուցիչների ազդեցությունը, որը զգացվում է ազգերի մշակութային փոխներգործության մասին նրա ուսումնասիրություններում: Իր գրական գործունեության հենց սկզբից նա ուսումնասիրողի գիտակցության մեջ ներդրեց արևմտաեվրոպական և օտար այլ գրականությունների փոխադարձ ազդեցությունների խնդիրը: 1898 թ. հրատարակած «Բանաստեղծական թարգմանություններ» գրքովում ցույց է տվել հայ գրականության տեղն ու դերը, առնչություններն այլ գրականությունների, մասնավորապես՝ արևմտաեվրոպական գրականության հետ: Շահագրգիռ, Դուրյանի, Ծատուրյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Լեոնցի գործերի կողքին են Հայկերի և Իբսենի ստեղծագործություններից կատարված թարգմանությունները:

1900 թ. լույս տեսավ «Գրական ակնարկներ»-ի առաջին հատորը, որտեղ Յու. Վեսելովսկին իր սկզբունքին հավատարիմ՝ հայ գրականության քննական ակնարկները հրատարակում է եվրոպական և ուսական գրականությունների ուսումնասիրության ընդհանուր շղթայի մեջ: Հատորում զետեղված հոդվածների մի մասը նախկինում տպագրվել էին. հայկական թեմաներով ակնարկներից էին՝ «Բայրոնը սբ. Ղազար կղզում», «Գրիբոյեդովը և հայերը» և այլն: Հայ գրականությանն ու կյանքին վերաբերող հոդվածներից բացի, ժողովածուում կար 18 հոդված՝ ուսումնասիրական գրական գործիչների՝ Պուշկին, Շեքսպիր, Շիլլեր, Դոդե և այլք, մասին:

1901 թ. հրատարակած «XIX դ. հայ պոեզիան և նրա ծագումը» վերնագրով ծավալուն հոդվածում Յու. Վեսելովսկին քննել է հայ պոեզիայի զարգացումը հնագույն ժամանակներից մինչև XX դ. սկիզբը:

Նկատենք, որ հայագետը 1900-ական թվականների սկզբին կրկին անդրադառնում է հայ ժողովրդի պատմական նշանակալից անցքերին, ոգևորված հերոսական էջերով՝ զբաղվում է հայ պատմագրության հարցերով: 1901 թ. լույս է տեսնում նրա «Հերոսական դարաշրջանի գրական գործիչ Եղիշե Վարդապետը» վերնագրով հոդվածը²³:

1902 թ. Յու. Վեսելովսկին հրատարակում է «Հայ բանաստեղծ Սմբատ

²³ Հոդվածի մասին մանրամասն տե՛ս А ко п я н. 1988, 123–126; Д а в т я н. 1970, 73–76.

Շահագրգիռ» վերնագրով գիրքը՝ հայ գրողների մասին ուսանողներին առաջին մենագրությունը: Ինչպես հայտնի է, Ս. Շահագրգիռ շուրջ 55 տարի ապրել է հայրենիքից հեռու՝ Մոսկվայում, ուսև իրականություն մեջ: «... քիչ կան հայ գրողներ, որոնց կյանքն ու գործունեությունն այդպես սերտորեն կապված լինեն ուսև իրականության հետ, — գրել է Վեսելովսկին: — ... Նրա լավագույն բանաստեղծությունները գրվել են Մոսկվայում կամ նրա շրջակայքում ... Իր ստեղծագործությունների մեջ նա երբեմն հիշատակում է Պուշկինի, Լերմոնտովի, Կոչևովի, Ֆոնտիզիևի, Կարամզինի, Շիշկովի, Ուշինսկու, 60-ական թվականների «Սովրեմեննիկի» և «Ռուսսկի վեստնիկի» մասին և այլն»²⁴: Ի դեպ, Շահագրգիռ մահից հետո՝ 1908 թ. մարտի 15-ին, Մոսկվայում Ռուսական բանահյուսություն սիրողների ընկերության նիստում, Յու. Վեսելովսկին հանդես է եկել նշանավոր բանաստեղծի մասին ընդարձակ զեկուցումով:

1906 թ. Արմավիրում տպագրվում է Յու. Վեսելովսկու «Ակնարկներ հայ գրականության և կյանքի մասին» վերնագրով ժողովածուն: Դրանում զետեղված էին 1900–1905 թթ. մամուլում հրապարակված հոդվածներն ու ակնարկները (թվով 15) հայ ժողովրդի հոգևոր և հասարակական կյանքի ամենատարբեր կողմերի, առանձին գրողների՝ Դուրյանի, Պարոնյանի, Պատկանյանի ստեղծագործությունների մասին, նաև՝ նվիրված գրական ազդեցությունների խնդրին, ինչպես, օրինակ, «Վ. Հյուգոյի ազդեցությունը հայ գրականության վրա», «Հայերի մասին որոշ հիշատակումներ XVIII դարի ուսական պոեզիայում»:

«Հայ արձակագիրներ» ժողովածուի հրատարակությունից հետո Վեսելովսկին մտածում էր հայ պոեզիայի անթողգիա ստեղծելու մասին: Եվ ահա 1907-ին լույս է տեսնում հայ նոր պոեզիայի առաջին անթողգիան՝ «Հայկական մուսա» վերնագրով ժողովածուն, որը նա խմբագրել էր պրոֆ. Գ. Խալաթյանցի հետ: Ժողովածուում ներկայացված էր XIX դ. և XX դարասկզբի հայ պոեզիան՝ 17 բանաստեղծի 87 ստեղծագործություն: Թարգմանություններին նախորդել էր Վեսելովսկու «Մի քանի խոսք հայ նորագույն պոեզիայի մասին» վերնագրով հոդվածը:

Վեսելովսկու ձեռքբերումը նաև այն էր, որ կարողացել էր հավաքել տաղանդավոր թարգմանիչների խումբ, որտեղ ընդգրկված էին այնպիսի բանաստեղծներ, ինչպիսիք էին՝ Կ. Բալմոնտը, Ի. Բունինը, Ի. Բելոուսովը, Ս. Գոլովաչևսկին, Ի. Գրինևսկայան, Լ. Ումանցը, Օ. Չյումինան և ուրիշներ: Մեծ էր նաև Գ. Խալաթյանցի լուծման, քանզի նա էր ընտրել նյութերն ու պատրաստել դրանց տողացի թարգմանությունները²⁵:

Ինչպես նկատվել է, Յու. Վեսելովսկու թարգմանությունների գլուխգործոցը «պետք է համարել Պատկանյանի «Արաքսի արտասուքը», որը «նուրբ ճաշակի տեր, պահանջկոտ խմբագիր Բյուսովը հավանել է» ու «Հայաստանի

²⁴ Веселовский. 1902, 10. Գիրքը վերահրատարակվել է 1905 թ.:

²⁵ Յու. Վեսելովսկին «Պրոֆ. Գ. Ա. Խալաթյանցը և հայ նոր գրականության մասնաշաղկապում» վերնագրով հոդվածում ընդգծում է «Հայկական մուսա» ժողովածուի հրատարակման գործում Գ. Խալաթյանցի ծանրակշիռ ներդրումը («Армянский вестник», 1917, № 10–11, 12 марта, 10–11):

պոեզիա» ժողովածուում արտատպել է այն «Հայկական մուսայից»²⁶:

1910 թ. Յու. Վեսելովսկին հրատարակում է «Գրական ակնարկներ» ժողովածուի երկրորդ հատորը (նկատենք՝ սա 1890 թ. հրատարակվածի տրամաբանական շարունակությունն էր): Այստեղ գետեղված էին տաս տարվա ընթացքում 1899–1909 թթ., գրած քննադատական հոդված-ակնարկները, գրական ուրվագծերը, որոնք սկզբնապես տպագրվել էին ռուսական պարբերական մամուլի ամենատարբեր օրգաններում: Սակայն դրանց մի մասը զգալի լրամշակված ու ընդարձակված էին: Հեղինակը գիրքը նվիրել էր հորեղբոր՝ Ալեքսանդր Նիկոլաևիչ Վեսելովսկու և բանաստեղծ ու գրականագետ, արևմտահայ բնակության գրականության թարգմանիչ, Ռուս գրողների միության փոխօգնության ղեկավար գործիչ Պյոտր Իսաևիչ Վեյներգի հիշատակին: Նախաբանում երախտագիտություն էր հայտնել նրանց, ովքեր բարի խոսքով կամ արժեքավոր տեղեկություններով օգնել էին ակնարկների վրա աշխատելիս: Նրանք էին՝ Մ. Բերբերյանը, Ս. Շահազիզը, Գ. Խալաթյանը, Վ. Սուրենյանը, Լ. Մանվելյանը: Ժողովածուում գետեղված նյութերի շարքում կրկին տեսնում ենք ռուս, եվրոպական և հայ գրականությունների մասին աշխատանքներ. Ֆ. Շիլլերի, Պ. Կոռնելի, Վ. Հյուգոյի մասին հոդվածներ, «Արևմտյան ազդեցությունը ռուսահայերի գրականության վրա», «Վաթնուսական թվականները և Մոսկվայի հայ ամսագիրը» և այլն: Վերջին հոդվածը նվիրված էր «Հյուսիսափայլ» ամսագրի ստեղծման և գործունեության պատմությանը: Ի դեպ, դա 1903 թ. մարտի 21-ին Ռուսական բանահյուսություն սիրողների ընկերության նիստում կարդացած դասախոսությունն էր՝ մասնակի կրճատված տեսքով:

1912 թ. Մոսկվայում լույս տեսավ Շիրվանզադեի երկերի ժողովածուի առաջին հատորը, որի առաջաբանը՝ գրողի ստեղծագործական ընդհանուր բնութագրով, գրել էր Յու. Վեսելովսկին: Ծանոթանալով դրա հետ՝ նույն թվականի մարտի 17-ին Շիրվանզադեն շնորհակալական նամակ է գրել նրան: Հիշենք նաև, որ Վեսելովսկին ու Շիրվանզադեն միմյանց ճանաչել են 1895 թ. հոկտեմբերից, երբ վերջինս Մոսկվայում այցելել է նրան:

Հարկ է նշել, որ Յու. Վեսելովսկին, այդ տարիներին մամուլում հանդես գալուց զատ, բազմիցս ելույթներ է ունեցել, դասախոսություններ է կարդացել հայ գրականությանը նվիրված երեկոներին, ներկայացրել է հայ գրողների ստեղծագործություններից կատարած իր թարգմանությունները: Այսպես, օրինակ, 1916 թ. նոյեմբերի 18-ին Մոսկվայում Բրյուխոնենկոյի գիմնազիայի շենքում, կայացել է Փրանսերենով նրա դասախոսությունը հայ գրականության մասին²⁷:

Յու. Վեսելովսկին հայ թատրոնի և թատերագիրների մասին

Յու. Վեսելովսկին հետազոտական առաջին քայլերը կատարելիս մեծապես հետաքրքրվել է հայ թատրոնով, դրամատուրգիայով, գրել է հոդվածներ, ակնարկներ, որոնք պատմաճանաչողական բնույթ ունեին՝ ռուս ընթերցողին

²⁶ Գ Ր Ի Գ Ր Ե Յ Ն. 1959, 32–33:

²⁷ «Армянский вестник», 1916, № 42, 13 ноября, 24. Այլ երեկոների մասին նաև տե՛ս «Кавказское слово» (Тифлис), 19. XII. 1914; «Հորիզոն» (Թիֆլիս), 23. X. 1915 և այլն:

ծանոթացնում էին հայկական մշակույթի հետ: Այդ աշխատանքներն են՝ «Պետրոս Աղամյան» (1891), «Հայ դրամայի հնագույն շրջանը» (1892), «Մկրտիչ Պեշկովի» (1892), «Հայ բեմի պատմությունից: Թիֆլիսի թատրոնն ու կենցաղային կատակերգությունը» (1892)²⁸: Վերջինիս մեջ բարձր է գնահատել, մասնավորապես, Գաբրիել Սունդուկյանին ու նրա «Պեպո», «Խաթաբալա», «Էլի մեկ զոհ», «Քանդած օջախ» պիեսները: Այստեղ նա արդեն հանդես է եկել իբրև թատերական քննադատ²⁹:

Յու. Վեսելովսկին 1902 թ. «Кавказский вестник» ամսագրի 7-րդ համարում տպագրել է «Կոռնելը և հայերը» վերնագրով հետաքրքիր ակնարկը, որը նվիրված էր XVII դ. ֆրանսիական դրամատուրգիայի պատմական այն ողբերգություններին, որոնցում հանդիպում են հայ հերոսներ կամ հայերի մասին կային հիշատակություններ³⁰:

Յու. Վեսելովսկին թատրոնի և թատերագիրների մասին իր աշխատանքը շարունակել է նաև հետագա տարիներին: Այսպես, առաջիններից մեկն է եղել, ով 1913 թ. անդրադարձել է Լ. Շանթի «Հին աստվածներ»-ին, խոսել դրամայի բեմադրության, հեղինակի ով լինելու, նրա աշխարհայացքի, ստեղծագործական վարպետության, կրած ազդեցությունների մասին՝ կարևորելով ու գնահատելով պիեսը: ««Հին աստվածներ» տաղանդավոր գրված մի պիեսա է, որ անցյալ սեզոնին Անդրկովկասում բացառիկ հաջողություն ունեցավ, կենդանի հետաքրքրություն գարթեցրեց թատրոնասերների շրջանում, ընդհանուր ուշադրության առարկա դարձրեց հեղինակի անձնավորության և ստեղծագործության վրա, որ մինչ այդ դեռևս բավականաչափ գնահատված չէր, – գրել է Վեսելովսկին: – Այդ պիեսան Լևոն Շանթի (կեղծ անունը) գրչի արդյունքն է: Շանթը հայ բեյլետրիստ է, որ գրական ասպարեզում միանգամայն նորություն չէ: Նա դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին է հրապարակ իջել, գրել է մի շարք վեպեր ու պատմվածքներ: Սակայն միայն այսօր գլուխ պտտեցնող արագությունը մեծ համբավ և ժողովրդականություն գրավեց: Հայ թատրոնի տարեգրության մեջ «Հին աստվածների» ներկայացումը բոլորովին նմանը չտեսնված մի բան է»³¹: Այնուհետև մեկնաբանելով պիեսի բովանդակությունը, չեչտադրումներ անելով, մասնավորապես, երիտասարդ աբեղայի ու վանահոր կերպարների վրա՝ Յու. Վեսելովսկին իր խոսքն ավարտում է հետևյալ հետաքրքիր եզրակացությամբ. «Հեղինակը մեզ տանում է Հին Հայաստան, Սևանի գեղատեսիլ կղզին: Գործողությունը տեղի է ունենում մեզնից 1000 տարի առաջ: Սակայն պիեսայի մեջ ոչ մի առանձին հայկական բան չկա կամ կապված չէ մի հայտնի ժամանակաշրջանի հետ: Ըստ ցանկության կարելի էր փոփոխել անունները, մի քանի մանրամասնություններ և պիեսան կհարմարվեր այս կամ այն ցեղին ու ժամանակին: Իզուր կլինեք փնտրել այդ գրվածքի մեջ զուտ տեղական սիրային որևէ մի բան, որ նման չլինեք մյուս ազգերի դրամատիկական ստեղծագործություններին, սյուժետներին և տեխնիկային:

²⁸ Մանրամասն տե՛ս Давтян. 1967, № 3, 102–108; Давтян. 1970, 18–35.

²⁹ Այս հոդվածն արժանացել է նաև «Մշակ» (Թիֆլիս) թերթի (29. VII. 1892) դրական արձագանքին:

³⁰ Տե՛ս Давтян. 1970, 72–73.

³¹ «Բաքվի ձայն», 21. VIII. 1913:

Շանթի դրաման համարյա թե հայերի կողմից առաջին գանձն է, որ նրանք մտցնում են համակարգողական գրականության մեջ: Ճշմարիտ է, մի քանի դեպքում կարելի է ցույց տալ, որ Շանթը հետևում է և ընդօրինակել է Իբսենին, Հաուպտմանին և ուրիշներին»³²:

Նկատենք նաև, որ Յու. Վեսելովսկին 1917 թ. անդրադարձել է Լ. Շանթի «Կայսր» դրամային՝ «Շողոքորթության և երեսպաշտության թագավորությունում (Լ. Շանթի «Կայսր» դրամայի առիթով)» վերնագրով հոդվածով, այն համարել է «սքանչելի, որպես գեղարվեստական ստեղծագործություն, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում և գաղափարական տեսակետից»³³:

1908 թվական. դասախոսություններ Պետերբուրգում և Բաքվում
«Հայկական մուսա» ժողովածուի հրատարակությունից հետո Յու. Վեսելովսկին ձեռնամուխ է լինում գրականագիտական ուրույն փորձի, այն է՝ հարցաթերթիկով դիմում է հայ գրողներին՝ ուսա գրականության ազդեցությունը նրանց վրա պարզելու հարցադրումով: Հարկ է ասել, որ Յու. Վեսելովսկին երկար տարիներ մոտիկից ճանաչել ու մտերիմ է եղել գրական-հասարակական բազմաթիվ գործիչների, այդ թվում՝ Ս. Շահազիզի, Մ. Բերբերյանի, Ա. Ծատուրյանի, Գ. Խաթաթյանի, Վ. Սուրենյանի, Ա. Սպենդիարյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Լ. Մսերյանի, Խ. Քյուչուկ-Հովհաննիսյանի և շատ ուրիշների հետ: Լազարյան ճամբարում ուսանելիս նրան ներկայացրել են Ռ. Պատկանյանին: Տարիների ընթացքում նամակագրական կապ ու հանդիպումներ է ունեցել Գ. Սունդուկյանի, Պ. Պոռյանի, Ղ. Աղայանի, Լեոյի, Մուրացանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի և այլ գրողների ու քննադատների հետ: Արդյունավետ աշխատակցել է հայկական թերթերին ու ամսագրերին, ինչպես, օրինակ, «Արձագանք»-ին, «Նոր-Դար»-ին, «Մշակ»-ին, «Լուսն»-ին, «Արոր»-ին և այլն: Հայ հասարակության միջավայրում նրա լայն ճանաչումն ու հեղինակությունն ապահովում են վերը նշված ձեռնարկի հաջողությունը. հավաքվում է հետաքրքիր ու արժեքավոր նյութ:

Հայ գրողների պատասխաններն ի մի բերելով Յու. Վեսելովսկին դրանք հասարակությանը ներկայացնում է դասախոսության տեսքով: 1908 թ. սկզբներին նախ Պետերբուրգի հայկական խմբակում, ապա ապրիլի կեսերին Բաքվի հայկական կուլտուրական միության հրավերով հայ գրականության մասին երեք դասախոսություն է կարդում քաղաքի հասարակական ժողովարանի սրահում: Ըստ մամուլի հաղորդումների՝ Բաքվում կարդացած դասախոսության նյութը կազմել են հետևյալ չորս հարցերը. 1) Ստեփանոս Նազարյանի գործունեությունը և նրա «Հյուսիսափայլը», 2) բանաստեղծ Սմբատ Շահազիզը և նրա երկերը, 3) կանացի տիպերը հայ գրականության մեջ և 4) ուսաց գրականության ազդեցությունը հայ հեղինակների վրա՝ հենց այս վերջինների խոստովանությամբ՝ ի պատասխան Վեսելովսկու հարցաթերթիկի³⁴:

Եվ քանի որ մինչ օրս այդ դասախոսության մեջ արծարծված հարցերը

³² «Բաքվի ձայն», 21. VIII. 1913:

³³ «Армянский вестник», 1917, № 24, 18 июня, 7.

³⁴ «Каспий» (Баку), 18. IV. 1908; «Баку», 18. IV. 1908; «Մշակ», 27. IV. 1908:

չըջանառություն մեջ չեն դրվել՝ գիտական հանրությունը դրանց ծանոթ չէ, ստորև մանրամասն ներկայացնենք Յու. Վեսելովսկու վերլուծություններն ու մեկնաբանությունները:

Խոսելով Սո. Նազարյանցի մասին՝ դասախոսն ընդգծել է այն մեծ նշանակությունը, որ նա ունեցել է հայ գրականության և մշակույթի վրա: «Հեռավոր Մոսկվայից, ուր Նազարյանցը հրատարակում էր առաջին հայկական ամսաթերթը՝ «Հյուսիսսովետ», լույսի ճառագայթները տարածվում-հասնում էին մինչև Կովկաս, ուր հայ ժողովուրդը ապրում էր տգիտության ու խավարի մեջ: Դա 60-ական թվականներին էր: Նազարյանցի փայլուն աջակիցներն էին՝ Նալբանդյանը, Շահազիզը, Միանասարովը և ուրիշները»³⁵:

Յու. Վեսելովսկին դասախոսություն մեջ մասնավորապես կանգ է առել 1907 թ. դեկտեմբերին Մոսկվայում վախճանված Ս. Շահազիզի գրական գործունեության վրա: Հանգուցյալը, ասել է նա, հայ բանաստեղծության ամենալավ ստեղծագործողներից մեկն էր: Նրա քնարը գտնվում էր Բայրոնի և ռուսաց բայրոնիզմի ազդեցության տակ, ամենապարզապես աշխատությունը գրված է «Չայլե Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի անմիջական ազդեցության տակ (նկատի ունի «Լևոնի վիշտը» պոեմը): Շահազիզի քնարը իրապես լուեց բանաստեղծի մահից շատ առաջ. նա կյանքի վերջին երկու տասնյակ տարիները նվիրել էր Լազարյան ճեմարանում մանկավարժական գործունեությանը: Ապրում էր Մոսկվայում, ուր նա անցկացրեց համարյա ամբողջ կյանքը՝ հեռու Կովկասից և իր ծննդավայր Աշտարակից:

Յու. Վեսելովսկին հայ գրականության մեջ կանանց տիպերն ուսումնասիրել է Պատկանյանի, Սունդուկյանի, Զուբարի, Շիրվանզադեի և այլոց գրվածքներում: Նրա կարծիքով հայ գրականության մեջ կանանց տիպերը բաժանվում են երեք կարգի. 1) աշխարհիկ կնոջ տիպը, որը եվրոպական քաղաքակրթության արտաքին փայլն է միայն յուրացրել, ինչպես, օրինակ, Պատկանյանի գրվածքում (նկատի ունի «Տիկին և նաժիշտ» վիպակը), որը շարունակ հուսարների ու բալերի մասին է երազում, 2) կիսաինտելիգենտ կնոջ տիպը, ինչպես, օրինակ, Սունդուկյանի «Էլի մեկ զոհ» պիեսի հերոսուհին, որն առաջին քայլերն է անում հայկական կյանքի նահապետական կարգերի բռնապետության դեմ կռվելու, 3) վերջապես կատարելապես ինտելիգենտ և ազատ կնոջ տիպը, ինչպիսին է Շիրվանզադեի «Արսեն Դիմաքսյան» վեպի հերոսուհին:

Ըստ մամուլի հաղորդումների՝ Յու. Վեսելովսկու դասախոսությունը ամենահետաքրքիր մասը եղել է այն բաժինը, երբ ունկնդիրներին ծանոթացրել է իր կատարած հարցաթերթիկի արդյունքների հետ, որ նա արել է 2–3 տարի առաջ՝ դիմելով հայ գրողներին հարցումով, թե ի՞նչ չափով և ի՞նչ աստիճան է եղել ռուս գրականության ազդեցությունը հայկականի վրա ընդհանրապես, և անձամբ իր՝ հարցման ենթարկվող հայ գրողի վրա՝ մասնավորապես: Այդ հարցումով Յու. Վեսելովսկին դիմել է հին և նոր սերունդների՝ թե՛ բանաստեղծներին, թե՛ արձակ գրողներին: Հին սերնդի բանաստեղծներից պատասխաններ ստացվել են Ղ. Աղայանից ու Շահազիզից, իսկ նորերից՝ Ծատուրյանից, Հովհաննիսյանից, Թումանյանից և Իսահակյանից: Արձակագիրներից պատասխանել են՝ Սունդուկյանը, Լեոն, Նար-Դոսը, Շիրվանզադեն և Զուբա-

³⁵ «Մշակ», 27. IV. 1908:

րը: Հարցման չեն ենթարկվել Պոռչյանը, Ահարոնյանը, Շանթը և բանաստեղծ Լևոն Մանվելյանը, քանի որ, ինչպես Վեսելովսկին է ասում, չի իմացել նրանց հասցեները:

Հարցման ենթարկված բոլոր գրողները հիացմունքով են արտահայտվել ուսու գրականության, բանաստեղծության ու արձակի տիտանների մասին, ինչպիսիք են՝ Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը, Տուրգենևը, Դոստոևսկին, Տոլստոյը և արձակի, դրամայի ու քննադատության հեղինակներ՝ Պիսարևը, Դոբրոլյուբովը, Սալտիկովը, Օստրովսկին, Ուսպենսկին, Գարշինը, Չեխովը և ուրիշներ:

Միմիայն Աղայանն ու Շիրվանզադեն են Վեսելովսկուն պատասխանել, որ անհատապես իրենց վրա շատ ավելի մեծ ազդեցություն են ունեցել եվրոպական կլասիկ գրողները՝ Շեքսպիրը, Գյոթեն, Դիկենսը, Ծլոբերը, Հյուգոն, Զոլան և ուրիշները, որոնց գործերն իրենք կարդացել են ուսերեն թարգմանությամբ:

Յու. Վեսելովսկին դասախոսությունը եզրափակել է՝ շեշտելով. «Այս բոլոր վերին աստիճանի համակրական արտահայտությունները ուսու գրականության մասին և այն անկեղծ խոստովանությունը, որ այդ գրականությունը ահագին ու զորավոր ազդեցություն է ունեցել իրենց՝ հայ հեղինակների վրա, ... փառավորապես հերքում են այն հեքիավեր, որ վաղուց ի վեր հնարել են «Новое время»-ի և տխրահռչակ Վելիչկոյի մարդատյաց երևակայությունն այն մասին, թե հայ ինտելիգենցիան անջատողական (սեպարատիստական) և առանձնանալու ձգտումներ ու միտումներ ունի: Հայերը պաշտում էին և պաշտում են այն գեղեցիկ, լուսատու, մեծ և մարդասիրական կողմերը, որոնցով համարձակ կարող է պարծենալ անմահ ուսու գրականությունը»³⁶:

Դասախոսության նյութերը Յու. Վեսելովսկին 1909 թ. հրատարակել է Մոսկվայում՝ «Ռուսական ազդեցությունը ժամանակակից հայ գրականության վրա» վերնագրով գրքույկով, լրացված՝ Լ. Մանվելյանի ու Ավ. Ահարոնյանի պատասխաններով, ներածական խոսքով, ծանոթագրություններով ու անվանացանկով³⁷:

Յու. Վեսելովսկի և Ա. Ծատուրյան. ստեղծագործական կապեր ու գնահատականներ

Յու. Վեսելովսկին հայ գրողներից առանձնապես մտերիմ է եղել Ա. Ծատուրյանի հետ: Հայտնի է, որ նա Վեսելովսկիների ընտանիքում ընդունված մարդ է համարվել³⁸, ինչի մասին վկայում է նաև Յու. Վեսելովսկու կինը՝ Մարիա Վեսելովսկայան, «Ակադեմիկոսի ընտանիքում» վերնագրով ինքնակենսագրական գրառումներում³⁹: Ի դեպ, այդտեղ նշվում է, որ հայ բանաստեղծը ներկա է գտնվել իրենց նշանադրությանը: Ինչևէ, սույն հոդվածի նախորդ էջերում արդեն ասվել է, որ Յու. Վեսելովսկին քաջածանոթ էր Ա. Ծատուրյանի գործունեությանը, բարձր էր գնահատում նրա գիտելիքները, հայ գրականության հարցերին անդրադառնալիս խորհրդակցում էր հետը:

³⁶ «Մշակ», 27. IV. 1908:

³⁷ Веселовский. 1909.

³⁸ Տե՛ս Հայ գրականության միջազգային կապերը. 1983, 11–13:

³⁹ Давтян. 1970, 59–60.

Յու. Վեսելովսկին եղել է Ծատուրյանի բանաստեղծությունների առաջին թարգմանիչը: Թիֆլիսում հրատարակվող «Новое обозрение» թերթի 1895 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին տպագրվում են Ծատուրյանի «Աղոթի՛ր» և «Սիրավառ սոխակն յուր անուշ երգով ...» բանաստեղծությունների Վեսելովսկու թարգմանությունները: «Вестник Европы» ամսագրի 1896 թ. սեպտեմբերյան համարում էլ հրապարակվում են Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի և Ա. Ծատուրյանի ստեղծագործություններից նրա կատարած թարգմանությունները: Մասնավորապես, Ա. Ծատուրյանից գետեղվել էին «Նորա արբուժում» և «Մի՞թե արդեն, ով ընկեր իմ, հոգնեցար ...» բանաստեղծությունները՝ ստեղծագործությունների համառոտ բնութագրով: 1896 թ. հոկտեմբերին Մ. Բերբերյանին գրած նամակում Յու. Վեսելովսկին հայտնում է. «Նա (Ծատուրյանը – Ա. Զ.) շատ գոհ է ու երջանիկ, որ իր բանաստեղծությունների ոտաներեն թարգմանությունները տեղ են գտել «Вестник Европы» ամսագրի էջերում»⁴⁰:

Նկատենք, որ հայ բանաստեղծն էլ իր հերթին մեծապես գնահատել է Վեսելովսկու վեհանձն գործունեությունը: Դրա պերճախոս վկայությունը դեռևս 1894 թ. մարտի 20-ով թվագրված Վեսելովսկուն նվիրված Ծատուրյանի «Օրեր են գալիս» մարտական բանաստեղծությունն է.

Օրեր են գալիս և օրեր գընում,
Անվերջ են մարդկանց ցավերն ու հոգսեր.
Եվ նա՛ է կյանքի հարատև կռվում
Մարտնչում, որպես զինվոր անվեհեր,
Ով լույսի սիրով սիրտը բորբոքած,
Ուխտել է լինել մշակ աշխարհի.
Ապրե՛լ – վեհ գործի հերոս անձնուրաց,
Մեռնե՛լ – մարտիրոս վեհ գաղափարի ...⁴¹

1894 թ. Ա. Ծատուրյանը թարգմանել էր «Русские ведомости» լրագրի նույն թվականի հոկտեմբերի 16-ի համարում Յու. Վեսելովսկու տպագրած «Հայ մամուլի հարյուրամյակը» վերնագրով «ընդարձակ ու ամփոփ» հոդվածը՝ «Մի համակրելի երևույթ» խորագրով ու առաջաբանով⁴²: Հոդվածի գրման շարժառիթը Հնդկաստանի Մադրաս քաղաքում հրատարակված հայկական առաջին «Ազդարար» լրագրի 100-ամյակն էր: Յու. Վեսելովսկին հանգամանորեն շարադրում է Հայ մամուլի անցած ուղին, մեկ առ մեկ թվարկում դրանց հրատարակման վայրերը, գնահատում յուրաքանչյուրի կարևորությունը հայության կյանքում: Միով բանիվ ներկայանում է որպես քաջատեղյակ անձ հայ լրագրության բնագավառում: Ըստ այդմ առաջաբանի հեղինակ Ա. Ծատուրյանի համար դա ևս մի հարմար առիթ էր, որ խոսուն տողերով ներկայացնի ու գնահատի հայագիտության ոլորտում Յու. Վեսելովսկու ներդրումը: «Պր. Վեսելովսկին առաջին անգամը չէ, որ ասպարեզ է գալիս իր մայրենի

⁴⁰ ԳԱԹ, Մ. Բերբերյանի ֆ., № 353:

⁴¹ Հայ գրականության միջազգային կապերը. 1983, 16, 104, ծանոթ. 19:

⁴² Ծ ա տ ու ռ ե ա ն. 1894, 1505–1513:

գրականության և մամուլի մեջ հայկական կյանքի այս ու այն աչքի ընկնող երևույթներին նվիրված խելացի, բանիբուն հոգվածներով և այդպիսով իր ազգակիցներին ճիշտ ու հիմնավոր գաղափար է տալիս մեր մասին, — գրում է Ա. Ծատուրյանը: — Մի քանի տարի է արդեն, որ նա սիրով հետևում է մեր ժամանակակից հասարակական և մտավոր կյանքի ընթացքին և առիթ եղած ժամանակն իսկույն իր բարի խոսքով ու բարեխիղճ կարծիքով հանդես է գալիս ուսուցիչ մամուլում: Այս կարճ ժամանակամիջոցում համեմատաբար նա շատ բան ունի գրած մեր կյանքի ու, մանավանդ, մեր գրականության մասին ..., որոնք ցրված են ուսանական պարբերական թերթերում, ամսագրերում և իր խմբագրությամբ ու պ. Մ. Բերբերյանի եռանդուն աջակցությամբ լույս ընծայած «Армянские Беллетристы» ժողովածուի մեջ: Պր. Վեսելովսկու այս վերջին գործը ..., որի վրա նա այնքան ջանք ու աշխատություն է թափել և որը գրավեց ուսուցիչ համարյա ամբողջ մամուլի լուրջ ուշադրությունը, արժանի է հայերիս առանձին համակրանքի և երախտագիտական զգացման»⁴³:

Ի դեպ, Մ. Բերբերյանին ուղղված 1895 թ. ապրիլի 28-ի ուշագրավ նամակում Ա. Ծատուրյանը, մասնավորապես, գրում է. «Ես, Մինաս, Վեսելովսկուն սիրում և հարգում եմ. երախտագիտական զգացմունքով գլուխ եմ խոնարհում ազգիս և իմ մայրենի գրականության մատուցած նրա ծառայությունների առաջ: Եվ իմ այդ անկեղծ հարգանքն ու համակրությունը ես մի անգամ արդեն «Մուրճ»-ի մեջ, հրապարակավ վկայել եմ նրան ...: Ես իմ վկայության տերն եմ միշտ»⁴⁴:

1910 թ. ապրիլի 30-ին Մոսկվայի հայկական ակումբի շենքում հայրենակից ուսանողների ջանքերով տեղի է ունենում Ա. Ծատուրյանի գրական գործունեության 25-ամյա հոբելյանի տոնակատարությունը՝ գրական-գեղարվեստական երեկոն: Զեկուցումով հանդես է գալիս բանաստեղծ Վահան Տերյանը, հուզումնալից ելույթ է ունենում նաև Յու. Վեսելովսկին: Մայիսի 2-ին էլ գրական-գեղարվեստական խմբակում Մոսկվայի հասարակայնությունը հանդիսավոր նշում է հայ բանաստեղծի հոբելյանը: Դա ոչ միայն հայ հասարակայնության, այլև ուսուցիչ գրչակից ընկերների հարգանքի խոսուն վկայությունն էր. հատկապես շեշտվում է եղբայրական ուսուցիչ ժողովրդի հոգևոր փանձարանին հայերին հաղորդակից դարձնելու Ծատուրյանի ծառայությունները: Հայ բանաստեղծին ողջունում է նաև Վեսելովսկին՝ ընդգծելով Ծատուրյան-թարգմանչի տաղանդն ու աշխատասիրությունը:

«Армянский вестник» ամսագրի 1917 թ. ապրիլի 16-ի համարում Ա. Ծատուրյանի մահից ընդամենը մի քանի օր անց (մահացել էր մարտի 31-ին, Թիֆլիսում), Յու. Վեսելովսկին հանդես է գալիս նրա մասին գրած հուշ-հոգվածով: Խորապես վշտացած անդառնալի կորստով վերհիշում է հայ բանաստեղծի հետ ունեցած հիշարժան հանդիպումները, մեծարում նրան. «Պայծառ ու անջնջելի էր հատկապես Սպասկայա կառամատույցի ամառանոցում (Մոսկ.-Յարոսլավյան երկաթգծի) անցկացրած 1893 թ. ամառը, երբ Ծատուրյանը հաճախակի էր գալիս ինձ մոտ, որը, ի դեպ, կրկնվեց և հաջորդ տարի: Այդ ամռանը համընդհանուր գրական աշխատանք սկսեցինք ... դրա-

⁴³ Ծ ա տ ու Ր ե ա ն. 1894, 1506–1507:

⁴⁴ Գրական ժառանգություն. 1940, 630:

նուժ քիչ դեր չէր խաղացել Հանգուցյալ Ալեքսանդր Իոսիֆովիչը»⁴⁵։ Ա. Ծատուրյանին նա գնահատում է «... որպես բազմակողմանի զարգացած, զգայուն, սրտամոտ ու բանիմաց զրուցակցի, պատրաստ արձագանքելու ամեն հարցի, լի՝ մշակութային ամենատարբեր հետաքրքրություններով», ապա հավելում ընդգծելով հայ բանաստեղծի սերն ու նվիրվածությունը գրականության հանդեպ. «Ծատուրյանը անկեղծ ու խորն էր սիրում գրականությունը, և այդ սերը նա պահպանեց ողջ կյանքում։ Ինչ խոսք, նրան ամենից հարազատն իր հայրենի գրականությունն էր, բայց և մյուս ժողովուրդների գրողները մշտապես հետաքրքրել են նրան։ Պուշկինը, Լերմոնտովը, Տուրգենևը, Չեխովը, Կոուտ Համսունը, Մետեղլինը, Հաուպտմանը, Ռոդենբախը, Իբսենը և շատ այլ հեղինակներ այս կամ այն չափով ուսումնասիրվել են նրա կողմից, նրանց ստեղծագործությունները վերլուծվել ու քննարկվել են ընկերական շրջապատում։ Ինձ հասցեագրած նամակներում նա մեկ անգամ չէ, որ անդրադարձել է գրական նորույթներին։ Նրա հետաքրքրությունը, մասնավորապես՝ ուսումնական գրողների ստեղծագործությունների հանդեպ, հետագայում արտացոլվեց ուսանողների կատարած նրա թարգմանություններում, թարգմանություններ, որոնց այնքան բարեխղճորեն ու հոգատարությամբ է նա մոտեցել, և որոնք երբեք չեն մոռացվի հայ հասարակության կողմից ...»⁴⁶։

1917 թ. մայիսի 19-ին Մոսկվայի գրական-գեղարվեստական խմբակում հայ մշակութային և ուսումնական գրականության ու արվեստի գործիչների մասնակցությամբ տեղի է ունենում խմբակի ամենահին անդամներից Ա. Ծատուրյանի հիշատակին նվիրված երեկույթ։ Բանաստեղծ-ընկերոջ գրական գործունեության մասին բացման ջերմ խոսք է ասում Վեսելովսկին։ Ելույթ են ունենում Վ. Բրյուսովը, Կ. Բայմոնտը, Յու. Բայտրուշայտիսը, հնչում է Սպենդիարյանի, Չայկովսկու, Շոպենի, Սկրյաբինի երաժշտությունը։

Հունիսի 4-ին Յու. Վեսելովսկին «Армянский вестник»-ում հրապարակում է հայ բանաստեղծի ստեղծագործությունների ուսանողների թարգմանությունների բիբլիոգրաֆիական տեղեկանքը։ Հանգամանորեն ներկայացնելով այդ թարգմանությունների հեղինակներին ու դրանց հրատարակման տեղը՝ նշում է, որ 1898 թ. հրատարակված «Բանաստեղծական թարգմանություններ» ժողովածուում ինքը գետեղել է 14 բանաստեղծություն, իսկ, ընդհանուր առմամբ, ուսանողներն է թարգմանվել Ա. Ծատուրյանի ավելի քան 50 գործ⁴⁷։

Հայոց ողբերգության հանդեպ Յու. Վեսելովսկու արձագանքն ու մոտեցումները

1890-ական թվականների կեսերից Թուրքիայում հայության նկատմամբ կիրառվող բռնություններն ու կոտորածները չէին կարող չմտահոգել Յու. Վե-

⁴⁵ «Армянский вестник», 1917, № 15, 16 апреля, 2.

⁴⁶ «Армянский вестник», 1917, № 15, 16 апреля, 2. Ռուս գրականությունից Ա. Ծատուրյանի կատարած թարգմանությունները հանգամանորեն ներկայացրել է Ա. Արամյանն իր «Ալեքսանդր Ծատուրյանը և ուսումնական գրականության թարգմանիչ» բաժնում (տե՛ս Հայ գրականության միջազգային կապերը. 1983, 34–102)։

⁴⁷ «Армянский вестник», 1917, № 22, 4 июня, 3–5.

սերվսկուն: Եվ ահա 1895 թ. «Русские ведомости»-ում (դեկտեմբերի 29-ի համարում) հրատարակում է «Հայերի դրուկյունը Թուրքիայում մինչև տերությունների միջամտությունը» ուսումնասիրությունը: Յու. Վեսելովսկին հանգամանորեն ներկայացրել է Հայկական հարցի ծագումն ու պատմությունը, դրա շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը, անդրադարձել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների նախագծերին և Թուրքական կառավարության տված «երաշխիքներին»:

1895–1896 թթ. Թուրքիայում հայկական կոտորածների կապակցությամբ Մոսկվայում Գրիգոր Ջանչյանի (Ջանչիև) ջանքերով 1897 թ. հրատարակվում է «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» վերնագրով մեծածավալ ժողովածուն: Ի դեպ, Ջանչյանն ապրում էր Մոսկվայում, 1890-ական թվականներին աչքի ընկնող հրապարակախոսներից էր, գրում էր ռուսերեն, ճանաչված ու հարգված էր ռուս մշակույթի նշանավոր ներկայացուցիչների կողմից: Ժողովածուի հրատարակությանը մասնակցելու համար դիմում է ռուս գրողներին, գիտնականներին, արվեստի մարդկանց՝ համագործակցության հրավերով: Ժողովածուի նպատակն էր ռուս հասարակությանը ծանոթացնել հայ ժողովրդի անցյալին ու ներկային, նրա մշակույթին, ռուս և հայ ժողովուրդների բարեկամության հիշարժան դրվագներին և այլն: Յու. Վեսելովսկին արձագանքում է կոչին և ժողովածուում հանդես է գալիս «Հայ նոր գրականության բնութագրության շուրջ» վերնագրով հոդվածով (նույնը տպված է նաև ժողովածուի 1898 թ. 2-րդ հրատարակության մեջ):

Հայտնի է, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից ռուս հասարակության ուշադրությունը մեծապես սեեռված էր Կովկասյան ճակատում տեղի ունեցող իրադարձությունների վրա, մասնավորապես՝ ռազմական թատերաբեմում հայտնված հայության ճակատագրին⁴⁸: Նման հետաքրքրության արձագանքն էր Հայաստանի պատմական անցյալի, ներկայի, մշակույթի մասին մեծաքանակ գրականության երևան գալը: Այդ գործում զգալի ներդրում ունի նաև Յու. Վեսելովսկին⁴⁹: Դրա խոսուն վկայություններից է 1915 թ. Մոսկվայում Ն. Ն. Օրֆենովի «Звезда» գրահրատարակչության լույս ընծայած «Հայկական ժողովածու»-ն: «Հորիզոն» թերթի հոդվածագիրը, «Գրական տեսություն» խորագրի տակ մանրամասն ներկայացնելով գիրքը, նշում է, որ այն կազմվել է «Հայ հասարակությանը հանրածանոթ» Վեսելովսկու, Ջիվլեղյանի, Կարա-Մուրզայի, Կ. Կոստանյանի, Սիմեոնյանց քահանայի, Տոտոմյանցի և Չոբանյանի հոդվածներից: «Ժողովածուի խմբագրությունը նպատակ է դրել այս հրատարակությամբ պարզել մի կողմից Թուրքահայերի ծանր քաղաքական և տնտեսական դրությունը, մյուս կողմից — վեր հանել հայ ժողովրդի բազմակողմանի կուլտուրական գործունեության ընդունակությունը: Կարելի է ասել, որ ժողովածուն խոշոր ծառայություն է մատուցել այդ երկու նպատակին, — գրում է հոդվածագիրը:— Մի շարք հոդվածներում խոսվում է հայ ժողովրդի կուլտուրական ընդունակությունների և այն նվաճումների մասին, որ նա ունեցել է, հակառակ ամենածանր քաղաքական պայմանների: Այսպես, Յու. Վեսելովսկին տալով մեր նոր գրականության բնորո-

⁴⁸ Տե՛ս Закарян. 2003; Закарян. 2003.

⁴⁹ Տե՛ս Давтян. 1970, 93–109.

շումը (հողվածի վերնագիրն է՝ «Երազանքները և իրականությունը ռուսահայ գրողների ստեղծագործություններում»։ այս թեմայով նա 1915 թ. փետրվարի 21-ին ելույթ է ունեցել Մոսկվայի համալսարանին կից Ռուսական բանաստեղծությունը սիրողների ընկերության նիստում – Ա. Զ.)՝ ապացուցում է, որ մեր գրողները ընդունակ են եղել յուրացնելու նորագույն գաղափարները և չեն եղել կույր հետևողներ, այլ ռուս գրականության տրամադրությունները և ոգին են յուրացրել, մնալով ռեալ հայկական հողի վրա։ Հայ իրականության ամենախիստ և անաչառ քննադատությունն է, որ, ըստ Վեսելովսկու, տվել է հայ գրականությունը⁵⁰։ Նկատենք նաև, որ Ջիվեղեզյանի հողվածում խոսվում է թուրքահայաստանի ապագայի մասին, Կարա-Մուրզայի հողվածի վերնագիրն էր՝ «Հայերը գեղարվեստի մեջ», Տոտոմյանցինը՝ «Թուրքահայաստանի տնտեսական դրությունը», Չոբանյանինը՝ «Թուրքահայերը և նրանց կուլտուրական գործունեությունը», իսկ Սիմեոնյանց քահանայի հողվածը ռուս հասարակությանը ծանոթացնում է հայ եկեղեցու պատմության ու ներկա կազմակերպության հետ և «միայն պ. Կ. Կոստանյանի հողվածն է, որ մեր կարծիքով, չի համապատասխանում «Ժողովածուի» նպատակներին»⁵¹, – գրում է հողվածագիրը։ Ժողովածուն բացվում էր Վեսելովսկու «Հայաստան» բանաստեղծությամբ։ Գիրքը բազմաթիվ արձագանքների է արժանանում, արագորեն սպառվում է, ըստ այդմ՝ 1915 թ. վերջին վերահրատարակվում է։

1915 թ. տպագրված «Թուրքահայաստանի ողբերգությունը» աշխատության մեջ, մասնավորապես, Վեսելովսկին խոր ցավով թվարկել է հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերը. «1890-ին տեղի ունեցավ Էրզրումի հայտնի կոտորածը, ընդ որում, հայ բնակչության ընդդիմության թույլ փորձերը սանձարձակ թուրք զինվորներն ու պաշտոնյաները խեղդեցին արյան մեջ։ 1894-ին կատարվեց Սասունի ահավոր սպանդը, հրեշավոր մի բան՝ թուրքական կանոնավոր զորքի և քուրդ խուժանի համերաշխ գործակցությամբ, այս կոտորածը, որի հետ կապված մի շարք առանձին դրվագներ մեկը մյուսից զայրացուցիչ են, 1895 թվականի Ջարդերի ու սպանությունների հետ միասին իրագործվում էին նախապես ծրագրված ու պարբերաբար»⁵²։ Այդ արյունոտ Ջարդերի նպատակը, ըստ հայագետի, արևմտահայ ազգաբնակչության ոչնչացումն էր կամ «հնարավորին չափ» հայկական տարրի կրճատումն Արևմտյան Հայաստանում։

«Кавказское слово» թերթի հողվածագիրը ներկայացնելով գիրքը՝ գրում է, որ հիշատակելով Գ. Զանչիեի խոսքերը, ըստ որի՝ թուրքահայաստանը եվրոպական կուլտուրայի ավանգարդն է Արևելքում, Վեսելովսկին գրքույկն ավարտում է հետևյալ խոսքերով. «Ուզում եմ հավատալ, որ եկել է այն ժամանակը, երբ այդ «ավանգարդը» կարժանանա լավ ճակատագրի, և ռուսական զորքի հաղթանակը բազմաչարճար թուրքահայաստանին հնարավորություն կտա «հառնել մոխրի և փոշու միջից», իր հայացքն ուղղել նոր կյանք բերող ծագող արևին»⁵³։

⁵⁰ «Հորիզոն», 26. VI. 1915:

⁵¹ «Հորիզոն», 26. VI. 1915:

⁵² Веселовский. [1915], 18–19.

⁵³ «Кавказское слово», 14. II. 1915.

1916 թ. դեկտեմբերի 7-ին «Մոսկվայի Հայերի Ընկերության» անդամների տարեկան երկրորդ հավաքում Յու. Վեսելովսկին ելույթ է ունեցել «Թուրքահայերի գրական ստեղծագործությունները» թեմայով⁵⁴:

«Թշվառ երկրի զավակները» (1916), «Թուրքահայաստանի ճակատագիրը» (1917), «Տառապյալ երեխաներ (Թուրք-Հայկական իրականության սարսափների աշխարհից)» (1917) հոդվածներում Վեսելովսկին բացահայտել է ցեղապանության քաղաքականության զոհերի՝ Հայ երեխաների ողբերգությունը, մերկացրել Թուրքական իշխանություններին, որոնք պետական անհրաժեշտություն են համարել «Հայերին վնասազերծելը»: «Այդ սովորական դարձած» «գրասենյակային կեղծիքը», որին բազմիցս դիմել է Թուրքիան՝ հետքերը վերացնելու կամ ջրից հոր դուրս գալու համար, երբ նրան բռնել են դաժանության և անօրինության մեջ, իհարկե, շատ բացահայտ էր, և Թուրքական դիվանագետներին չհաջողվեց ոչ մեկին չփոխեցնել: Եվ որ «Հեղափոխականների» շարքերում, որոնց դեմ պայքարում էր Թուրքական կառավարությունը, կային 10 տարեկանից փոքր երեխաներ, երբեմն նաև ծծկերներ, հաստատված է բոլոր նրանց վկայություններով, ովքեր չեն կորցրել արդարության և անաչառության զգացումը»⁵⁵, – վրդովմունքով գրել է նա:

Յու. Վեսելովսկին «Армянский вестник»-ում

Յու. Վեսելովսկին իր բազմաբնույթ և բազմաբովանդակ գործունեության ընթացքում սերտ կապերի մեջ է եղել ռուսական ու հայկական մամուլի բազմաթիվ օրգանների հետ, աշխատակցել է դրանցից շատերին, իսկ վերջին շրջանում տպագրվել է մասնավորապես՝ «Армяне и война», «Вестник Европы», «Вестник воспитания» և այլ պարբերականներում:

1916 թ. Յու. Վեսելովսկին դառնում է Մոսկվայում հրատարակվող «Армянский вестник» հասարակական-քաղաքական և գրական շաբաթաթերթի ակտիվ աշխատակիցը: Համարից համար այստեղ տպագրվում են Հայ գրականության առանձին հարցերին նվիրված նրա ակնարկ-հոդվածները, թարգմանություններն ու բանաստեղծությունները⁵⁶:

«Հայերի ճակատագիրը ամերիկյան գրողի պատկերմամբ», «Լավագույն օրերի արշավույթին», «Հայերի ճակատագիրը և ռուսական աճող սերունդը»⁵⁷ և հրապարակախոսական այլ հոդվածներում Վեսելովսկին, անկեղծ մարդասիրությամբ ու համակրանքով բազմաչարչար ժողովրդի նկատմամբ, մերկացրել է Թուրքական կառավարության հակահայ քաղաքականությունը, շոշափել Հայաստանի հասարակական-քաղաքական դերի, նրա ներկայի ու ապագայի հարցերը:

Մեծն Հայր Ղևոնդ Ալիշանի նման երբևէ չլինելով Հայաստանում, բայց տողորված հայասիրությամբ՝ Յու. Վեսելովսկին այդ տարիներին Հայաստանին ու հայերին նվիրեց բանաստեղծությունների մի ամբողջ շարք՝ «Հայերին»,

⁵⁴ «Армянский вестник», 1916, № 46, 11 декабря, 23.

⁵⁵ «Армянский вестник», 1917, № 39–40, 8 октября, 4.

⁵⁶ Մանրամասն տե՛ս Д а в т я н. 1970, 96–108.

⁵⁷ Համապատասխանաբար տե՛ս «Армянский вестник», 1917, № 5, 29 января, 21–22; № 14, 9 апреля, 4–5; № 31, 6 августа, 2–4.

«Հայաստանում», «Հայ ժողովրդին», «Ավերակների վրա», որը Հայ ժողովրդի հանդեպ անկեղծ ցավի արտահայտություն էր: «Հայաստան» բանաստեղծություն (1911) մեջ նա գովերգում է հերոսների երկիրը, Հայ ժողովրդի՝ ազատության հասնելու անկոտրում կամքը, հավատը լուսավոր ապագայի հանդեպ:

Пусть злобен враг – и, как в былые годы,
Твоих детей несчастных льется кровь,
Армянский край, ты долго ждал свободы, –
Твой близок день ... он не померкнет вновь!⁵⁸

Հայերի ճակատագրի մասին են նաև Յու. Վեսելովսկու «Վարդան Մամիկոնյանի մահը» (1916), «Հայ կալանավորի մտորումները» (1916) բանաստեղծությունները:

Շաբաթաթերթում տպագրվել են նաև Հայ բանաստեղծների ստեղծագործություններից Յու. Վեսելովսկու կատարած մի քանի թարգմանություններ, այդ թվում՝ Մ. Նաբանդյանի «Իտալացի աղջկա երգը»՝ «Наш край родной» վերնագրով⁵⁹:

1917 թ. նոյեմբերի 25-ին «Армянский вестник»-ի խմբագիր-հրատարակիչ Իվ. Ամիրովը նամակով դիմում է Յու. Վեսելովսկուն և հայտնում, որ ստեղծված պայմաններից ելնելով մտադիր է ամսագրի հավելված հրատարակել՝ «Сборник Армянского вестника». Ըստ այդմ՝ առաջարկում է խմբագրել ժողովածուն⁶⁰: Անչափ խորհրդանշական է, որ ամսագրի հրատարակությունն ակտիվ մասնակցություն ունեցող անձանցից՝ Վ. Բրյուսովից, Ա. Ջիվելեզովից, Ս. Կարա-Մուրզայից, Լեոյից, Կ. Միքայելյանից, Վ. Տոտոյանից և մյուսներից, խմբագիր-հրատարակիչը նախապատվությունը տվել է հենց Վեսելովսկուն: Դա, անշուշտ, խոսում է նրա գրական անուրանալի տաղանդի, գիտական իմացության և խմբագրական-հրատարակչական մեծ փորձի գնահատության մասին, որոնք, ի վերջո, դառնալու էին գործի հաջողության գրավականը: Վեսելովսկին սիրով ընդունում է առաջարկը. առաջին գիրքը լույս է տեսնում 1918 թ.: Դրանում գետեղված էր նրա «Նոր տարվա նախաշեմին» բանաստեղծությունը. հեղինակն հույս ունի Հայաստանը տեսնել թուրքական լծից ազատագրված: «Թող երկար սպասված ազատությունը փայլատակի նաև Հայաստանի համար», – ահա մեծ հայասերի գերագույն ցանկությունը:

Այս գրքում է տպագրվել նաև Յու. Վեսելովսկու վերջին հոդվածը՝ Ս. Շահագիրի մահվան 10-ամյակին նվիրված՝ «Սմբատ Շահագիրի հիշատակին» վերնագրով:

Մի ուշագրավ փաստ ևս. Յու. Վեսելովսկին 1916 / 1917 թթ. «Вестник Европы» ամսագրի համար գրել է «Հայաստանը և Ֆրանսիական մշակույթը» վերնագրով հոդված, որը, սակայն, չի տպագրվել: Այդ մասին նա 1917 թ. հունվարի 22-ին հայտնում է Մ. Բերբերյանին ու ավելացնում, որ պատրաստվում է

⁵⁸ Веселовский. 1972, 37.

⁵⁹ «Армянский вестник», 1916, № 30, 21 августа, 8–9.

⁶⁰ Տե՛ս ԳԱԹ, Յու. Վեսելովսկու ֆ., № 14, Давтян. 1970, 107–108.

առաջիկայում հիշյալ թեմայով զեկուցում կարդալ թիֆլիսում⁶¹:

Հայտնի է նաև, որ «Մոսկվայի հայկական հրատարակչությունը» պատրաստվել է 1918 թ. տպագրել Յու. Վեսելովսկու «Հայկական հարցը և ուսու հասարակությունը» վերնագրով գիրքը⁶²:

Ցավոք, նշված ծրագրերը չեն իրականանում. հոր մահից մի քանի ամիս անց՝ 1919 թ. ապրիլի 11-ին, ուսու մեծ հայասերը 47 տարեկան հասակում կնքում է մահկանացուն:

Եզրակացություն

1916 թ. Յու. Վեսելովսկին «Այն ժամանակ և հիմա» վերնագրով բովանդակալից հոդվածում գրում է. «... եթե այժմ ուսու հասարակության և մտավորական շրջանների տրամադրությունը հայերի նկատմամբ դարձել է միանգամայն այլ ..., ապա դա կյանքի է կոչվել ոչ միայն նրանով, որ նորագույն ժամանակներում երևան են եկել մի քանի նոր գրքուկներ և հոդվածներ՝ նվիրված հայ ժողովրդին ու նրա գրականությանը, այլև ջանադիր ու համառ այն աշխատանքով, որը մոտավորապես քառորդ դարի ընթացքում նախապատրաստել է որոշակիորեն հենց հիմա դրսևորվող ուսու հասարակական կարծիքի շրջադարձ: Անհրաժեշտ էր երկար տարիներ խոսել հենց այդ նույն հարցերի մասին, հիշեցնել այն մասին, որը չպետք է մոռացվեր, մշտապես հարվածել մի կեսի, արթնացնել ընթերցողին, վտանգի ենթարկելով քեզ, որ վրադ մեղադրանք կբարդեն դրա միօրինակության և կրկնության համար, որ արդեն ասվել է ավելի վաղ, բայց զգալով, որ դա անխուսափելի է, քանի որ մտադիր ես լինում պայքարել քարացած նախապաշարմունքների հետ և նախապատրաստել երկու ժողովուրդների փոխըմբռնումը»⁶³:

Վերոգրյալն ամբողջությամբ վերաբերում է անձամբ Վեսելովսկուն. նա ուսու իրականության մեջ առաջինն էր, ով շուրջ երեք տասնամյակ սիրով, սիստեմատիկ ուսումնասիրել և ուսու հասարակության միջավայրում եռանդուն ժողովրդականացրել է հայ գրականությունն ու մշակույթը, պատմությունը, գրել է Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարք, գրականագիտական-վերլուծական տասնյակ հոդվածներ, հայ պոեզիայից կատարել է բազմաթիվ թարգմանություններ, սերտ առնչություններ է ունեցել մեր գրական-հասարակական շրջանների հետ՝ ծանրակշիռ ներդրում ունենալով ուսու և հայ ժողովուրդների բարեկամության ասպարեզում: Հենց դրանում է Յու. Վեսելովսկու կատարած գործի պատմական նշանակությունը: Արձանագրենք, որ նրա ձեռնարկած շնորհակալ աշխատանքն այնուհետև շարունակեցին Մ. Գորկին և Վ. Բրյուսովը⁶⁴:

⁶¹ Сб'у Арешян. 1944, 93; Арешян. 1957, 328.

⁶² «Армянский вестник», 1918, № 1, 01 января, 2.

⁶³ «Кавказское слово», 01. X. 1916; «Армяне и война» (Одесса), 1916, ноябрь, № 9, 128–129.

⁶⁴ Сб'у Закарян. 2016. Նկատենք, որ Մ. Գորկու խմբագրությամբ 1916 թ. մայիսին Պետրոգրադում հրատարակված «Հայ գրականության ժողովածու»-ի առաջաբանում արձանագրվել է՝ խմբագրությունն արժեքավոր «ցուցումներ» է ստացել նաև Յու. Վեսելովսկուց: Վերջինս ընդարձակ գրախոսություն է գրել և քննադատաբար մոտեցել նաև Վ. Բրյուսովի «Հայաստանի պոեզիա» ժողովածուին՝ մատնա-

Լինելով հայ ժողովրդի պատմությանը քաջատեղյակ անձ, վերարտադրելով անցյալի հերոսական էջերը, հիանալով նրա վաղեմի փառքով՝ Յու. Վեսելովսկին ցավով էր խոսում ողբերգական ներկայի մասին: Այնուամենայնիվ, մեծ մարդասերը խոր հավատ ուներ Հայաստանի ու հայ ժողովրդի լուսավոր ապագայի նկատմամբ:

Անուշավան Զաքարյան — բ. գ. դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարասկզբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ուս պատմագրական, մշակութային կապեր: Հեղինակ է 22 մենագրության ու ժողովածուի, ավելի քան 250 հոդվածների և հրապարակումների: patmhandes@rambler.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Ա. 1943, Յուրի Վեսելովսկու անտիպ բանաստեղծությունները. — «Տեղեկագիր ՍՍՍՐ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի», սերիա I, Հասարակական գիտություններ, № 2, էջ 89–93:

Արեշյան Ս. 1946, Ռուս գրողները Հայաստանի մասին, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 28 էջ:

«Արձագանք» (Թիֆլիս), 11, 14. X. 1892:

«Բաքվի ծայն», 21. VIII. 1913:

Գրական ժառանգություն. 1940, առաջին գիրք, Երևան, Արմֆան-ի հրատարակչություն, 647 էջ:

Գրիգորյան Կ. 1959, Վալերի Բրյուսովը և հայ պոեզիան, Երևան, Հայպետհրատ, 214 էջ:

Ծատուրեան Ա. Մի համակրելի երեւոյթ. — «Մուրճ» (Թիֆլիս), 1894, № 10, հոկտեմբեր, էջ 1505–1513:

Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Մ. Բերբերյանի ֆ., № 272, 273, 285, 292, 353, Յու. Վեսելովսկու ֆ., № 14:

Հայ գրականության միջազգային կապերը. 1983, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 386 էջ:

Հայկական սովետական հանրագիտարան. 1985, հ. 11, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ:

Հանրագիտական բառարան. 2018, հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատ., 1144 էջ:

Հովնան Գ. 1961, Ռուս-հայ գրական կապերը XIX–XX դարերում, գիրք երկրորդ, Երևան, ՀՍՍՐ ԳԱ հրատ., 491 էջ:

«Հորիզոն» (Թիֆլիս), 26. VI. 1915, 23. X. 1915:

Ղուկասյան Զ. 1961, Ռուս-հայ գրական կապերը նախառևոյցից շրջանում, Երևան, Հայպետհրատ, 251 էջ:

Նշելով առավելություններն ու թերությունները. տե՛ս «Вестник Европы» (Петроград), 1917, 361–367. Գրախոսությունն արտատպվել է «Армянский вестник»-ում. 1917, № 25, 25 июня, 15–16; № 26, 2 июля, 15–16. Յու. Վեսելովսկու քննադատական ղիտողությունների մասին տե՛ս Գ Ր Ի Գ Ր Ե Յ Ն. 1959, 197–201:

- «Մշակ» (Թիֆլիս), 29. VII. 1892, 27. IV. 1908:
- Նանունյան Ռ. 1945. Հայ-ռուս գրական կապերի շուրջը: Համառոտ ակնարկ, Երևան, ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ., 53 էջ:
- «Նոր-Ղար» (Թիֆլիս), 03. II. 1900, 11. II. 1900:
- Շահ-Նազարեանց Ս. բժ. 1901, Մարդասիրության եւ աշխատանքի ազնիվ գինուրը Իւրիյ Ալեքսէեւիչ Վեսելովսկիյ (18^{XII}/₂₇ 89–1899 թ.թ.), Մոսկուա, Տպարան Բ. Բարխուդարեանի, 83 էջ:
- 1815–1890. 1891, Семидесятипятилетие Лазаревского института восточных языков. Исторический очерк и приложения Г. И. Кананова. М., Типография А. А. Гатцука, 254 с. +4 табл.
- Акопян Э. А. 1988. Арменоведение в России (Вопросы филологии). Ереван, Изд-во АН Арм ССР, 319 с.
- Арешян С. 1944, Юрий Веселовский и армянская литература. – «Известия» АН АрмССР, № 3–4, с. 75–108.
- Арешян С. Г. 1957, Армянская печать и царская цензура. Ереван, Изд-во АН АрмССР, 514 с.
- «Армяне и война» (Одесса), 1916, ноябрь, № 9, с. 126–129.
- Армянская муза. Сборник, изданный под редакцией Юрия Веселовского и проф. Г. А. Халатянца. 1907. М., Типо-литогр. Т-ва И. Н. Кушнерев и К^о, 184 с.
- Армянские беллетристы. 1893, Сборник, изданный под редакцией Юрия Веселовского и Минаса Берберьяна. Т. первый. М., Типо-лит. Высочайше утвержд. Т-ва И. Н. Кушнерев и К^о, 519 с.
- «Армянский вестник» (М.), 1916–1918.
- «Баку», 18. IV. 1908.
- Братская помощь пострадавшим в Турции армянам. Литературно-научный сборник ... 1897. М., Типо-литография К. Ф. Александрова, XLVIII+880 с.
- Веселовский Ю. 1902, Армянский поэт Смбат Шах-Азиз. Критический этюд. М., Типо-литография А. В. Васильева и К^о, 104 с.
- Веселовский Ю. 1909, Русское влияние в современной армянской литературе (На основании анкеты). Лекция, читанная в Петербурге и Баку. М., Типо-лит. Т-ва И. Н. Кушнерев и К^о, 48 с.
- Веселовский Ю. [1915], Трагедия Турецкой Армении. М., Книгоиздательство «Звезда» Н. Н. Орфенова, 47 с.
- Веселовский Ю. 1916, На заре русского армянофильства. – «Армянский вестник», № 4, 21 февраля, с. 9.
- Веселовский Ю. А. 1972, Очерки армянской литературы, истории и культуры. Вступ. статья, сост., ред. и прим. А. Давтян. Ереван, «Айастан», 502 с.
- «Вестник Европы» (Петербург, Петроград), 1893, сентябрь, т. V, с. 385–391; 1917, книга вторая, февраль, с. 361–367.
- Ганалаян О. 1988, Армения в творчестве русских поэтов. Статьи. Ереван, «Советакан грох», 180 с.
- Давтян А. 1965, Поборник гуманизма и дружбы народов. – «Известия» АН АрмССР, серия общест. н., № 10, с. 37–46.
- Давтян А. 1967, Юрий Веселовский и армянский театр. – «Литературная Армения», № 3, с. 102–108.
- Давтян А. М. 1967, Юрий Веселовский – исследователь и пропагандист армянской литературы в России конца XIX – начала XX веков. – Автореферат дисс. на соиск. уч. ст. канд. филол. н. Ереван, 20 с.

- Давтян А. 1970, Юрий Веселовский и армянская литература. Ереван, «Айастан», 298 с.
- Закарян. 2003, Александр Кулебякин и Армения. Ереван, Авторское изд., 238 с.
- Закарян А. 2003, Трагедия армянского народа в оценке русских литераторов. Ереван, МИГА НАН РА, 286 с.
- Закарян А. 2016, Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 168 с.
- «Кавказское слово» (Тифлис), 19. XII. 1914; 14. II. 1915; 01. X. 1916.
- «Каспий» (Баку), 18. IV. 1908.
- Некрасова Е. 1892, Армянский писатель Раффи. – «Мир божий» (СПб.), № 2, февраль, с. 1–14.
- Оганнисян Р. 1952, Из истории оценки русской литературы армянской общественной мыслью. Ереван, «Айпетрат», 297 с.
- «Русские ведомости» (М.), 04. X. 1892; 16. X. 1894; 29. XII. 1895.
- «Русская мысль» (М.), 1893, № 7, с. 302–303.
- Саводник В. 1922, Научные известия. Сб. 2. М., ГИЗ., 387 с.

ЮРИЙ ВЕСЕЛОВСКИЙ И АРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ

АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

Ключевые слова: Ю. Веселовский, Москва, Лазаревская семинария, армянская действительность, М. Берберян, Конгрегация мхитаристов Венеции и Вены, Нор-Нахичеван, история Армении, армяно-русские литературные связи, театр и драматургии, С. Шах-Азиз, А. Цатурян, переводы, юбилейное торжество, лекция, Баку, «Армянский вестник».

Исполнилось 150 лет со дня рождения известного русского ученого-литературоведа, поэта, переводчика, арменоведа, первого в России, с конца 80-х годов XIX века, глубокого исследователя и пропагандиста истории, литературы, искусства армянского народа – Юрия Алексеевича Веселовского. Его исследования являются ценным вкладом в деле развития арменоведения в России.

Сын профессора Московского университета, талантливого исследователя мировой литературы, автора многочисленных статей и исследований Алексея Николаевича и переводчицы Александры Адольфовны Веселовских и племянник академика Александра Николаевича Веселовского – Юрий Веселовский родился 6 июля 1872 г. в Москве. В 1886–1890 гг. учился в Лазаревской семинарии; с помощью своих одноклассников выучил армянский алфавит, начал читать и писать по-армянски. Особенно привлекали его внимание армянская литература и история. Ю. Веселовский – первый русский писатель, который, делая начальные попытки сочинения

стихов еще в школьные годы, посвятил их Армении и армянам. Эти стихи – теплые выражения глубокой симпатии русского юноши по отношению к прошлому и настоящему армянского народа. Красноречивым свидетельством его армянофильства является также то, что во время учебы, в 1889 г., Ю. Веселовский, находясь вместе с родителями за границей, посетил Конгрегации мхитаристов в Венеции и в Вене, общался с ними. Чтобы ближе узнать армян, он в 1892 г. несколько недель жил в Нор-Нахичеване, познакомился с бытом местных армян, посетил культурные и образовательные учреждения.

В 1890–1894 гг. Ю. Веселовский учился на историко-филологическом факультете Московского университета; параллельно с западноевропейской литературой изучал историю, литературу и искусство Армении.

Ю. Веселовский был знатоком русской и западноевропейской литературы, особенно драматургии и театра. И не случайно, что среди его арменоведческих трудов большое место занимают статьи об армянском театре: «Петрос Адамьян» (1891), «Древнейший период армянской драмы» (1892), «Мкртич Бешикташлян» (1892), «Из истории армянской сцены. Тифлисский театр и бытовая комедия» (1892).

С целью популяризации армянской литературы в русской общественной среде Ю. Веселовский с М. Берберяном издают в 1893 г. первый том сборника «Армянские беллетристы», а в 1894 г. – второй том под названием «Армянские беллетристы, драматурги и поэты». В 1898 г. выходит в свет сборник Ю. Веселовского «Стихотворные переводы», куда вошли также переводы из армянской поэзии.

За большие заслуги перед армянской литературой 22 января 1900 г. в московской гостинице «Континенталь» армянская колония отметила десятилетие литературно-общественной деятельности Ю. Веселовского.

В 1900 г. был издан первый том «Литературных очерков» Ю. Веселовского, где помещены также очерки на армянскую тематику: «Байрон на острове Св. Лазаря», «Грибоедов и армяне» и др. В обширной статье «Армянская поэзия 19 века и ее происхождение» (1901) он рассмотрел развитие армянской поэзии с древнейших времен до начала XX в. Ю. Веселовский занимался также вопросами армянской историографии: написал исследование «Литературный деятель героической эпохи Егише Вардапет» (1901). Он автор статей о С. Назаряне, М. Налбандяне, Р. Патканяне, П. Прошяне, Раффи, П. Дуряне, А. Пароняне, А. Цатуряне и других; монографии «Армянский поэт Смбат Шах-Азиз» (1902). На основе фактического материала написаны его работы «Корнель и армяне» (1902), «Очерки армянской литературы и жизни» (1906).

В 1907 г. под редакцией Ю. Веселовского и Г. Халатянца была напечатана первая антология новой армянской поэзии – «Армянская музыка».

Из армянской поэзии Ю. Веселовский переводил произведения М. Налбандяна, Р. Патканяна, С. Шах-Азиза, Г. Алишана, П. Дуряна, М. Пешикташляна, Ов. Туманяна, А. Цатуряна, Ав. Исаакяна и других. Множество его переводов было опубликовано в русской периодической печати («Вест-

ник Европы», «Новое обозрение», «Армянский вестник» и др.). Широко известен его труд «Русское влияние в современной армянской литературе» (1909). Ряд работ Ю. Веселовский посвятил вопросу влияния западно-европейской литературы (П. Корнель, Ф. Шиллер, В. Гюго и др.) на армянскую. В 1910 г. вышел в свет второй том «Литературных очерков».

В годы Первой мировой войны Ю. Веселовский поднял свой голос протеста в защиту армянского народа: в 1915 г. в Москве усилиями Веселовского, Дживелегова, Кара-Мурзы был издан «Армянский сборник», в том же году вышла брошюра «Трагедия турецкой Армении». В 1916–1918 гг. Веселовский принимал активное участие в работе издававшегося в Москве еженедельника «Армянский вестник», выступал, в частности, с публицистическими статьями [«Дети обездоленного края», «Страдающие дети (из мира ужасов турецко-армянской действительности)», «Английская повесть из армянской жизни», «Участь армян в изображении американского писателя», «Участь армян и подрастающее русское поколение», «На заре лучших дней» и др.]; с искренней любовью и сочувствием по отношению к многострадальному народу обнажал антиармянскую политику турецкого правительства, касался вопросов общественно-политической роли Армении, ее настоящего и будущего.

Никогда не бывая в Армении, но преисполненный армянофильством, Ю. Веселовский в эти годы посвятил Армении и армянам цикл стихов: «Армянам», «Армения», «В Армении», «Армянскому народу», «На развалинах», «Смерть Вардана Мамиконяна», «Размышления армянского узника». В стихотворении «В преддверии Нового года» (1918) автор выражает надежду увидеть Армению освобожденной от турецкого ига. Известно, что Ю. Веселовский готовил к изданию книгу «Армянский вопрос и русское общество». К сожалению, это не сбылось: великий гуманист, олицетворяющий дружбу армянского и русского народов, прививающий интерес и любовь русской общественности к Армении, армянской литературе, 11 апреля 1919 г. безвременно ушел из жизни в возрасте 47-ми лет.

Анушаван Закарян – д. филол. н., главный редактор ИФЖ, старший научный сотрудник отдела искусства армянской Диаспоры и международных связей Института искусств НАН РА. Научные интересы: вопросы первой четверти армянской действительности XX века, Армянский вопрос и Геноцид армян, армяно-русские историко-литературные и культурные связи. Автор 22 монографий и сборников, более 250 статей и публикаций. patmhandles@rambler.ru

YURI VESELOVSKY AND ARMENIAN REALITY

ANUSHAVAN ZAKARYAN

Summary

Key words: Yu. Veselovsky, Moscow, Lazarian Seminary, Armenian reality, M. Berberyan, Mkhitarist Congregation of Venice and Vienna, Nor-Nakhijevan, history of Armenia, Armenian-Russian literary ties, theatre and playwrights, S. Shahaziz, A. Tsaturyan, translations, anniversary celebration, lecture, Baku, "Armenian Bulletin".

This year marks the 150th anniversary of the birth of the famous Russian scientist-literary scholar, poet, translator, Armenologist, Yuri Aleksey Veselovsky – the first thorough researcher and propagandist of the history, literature and art of the Armenian people in Russia since the late 80s of the 19th century. His studies are a valuable contribution to the development of Armenology in Russia.

The son of a professor at Moscow University, a talented researcher of world literature, the author of numerous articles and studies, Alexey Nikolaevich and translator Alexandra Adolfovna Veselovsky, and the nephew of Academician Alexander Nikolaevich Veselovsky – Yu. Veselovsky was born on July 6, 1872 in Moscow. In 1886-1890, he studied at the Lazarian Seminary; with the help of his classmates he learned the Armenian alphabet, began to read and write in Armenian. His attention was especially attracted by Armenian literature and history. Yu. Veselovsky is the first Russian writer who, having made his first poetic attempts still in school years, dedicated them to Armenia and Armenians. Those poems are warm expressions of the Russian youngster's deep sympathy and love for the past and present of the Armenian people. It is also an eloquent testimony of his Armenian love that when he was a student in 1889, Yu. Veselovsky, being abroad with his parents, visited the Mkhitarist Congregation in Venice and Vienna and communicated with them. In order to get to know the Armenians more closely, in 1892 he lived in Nor-Nakhijevan for several weeks, got acquainted with the local Armenians, visited cultural and educational institutions.

In 1890-1894 Yu. Veselovsky studied at the Faculty of History and Philology of Moscow University; along with Western European literature, he studied the history, literature and art of Armenia.

Yu. Veselovsky was a connoisseur of Russian and Western European literature, especially drama and theater. And it is no coincidence that among his works on Armenian studies, the articles about the Armenian theater occupy a large place: "Petros Adamyan" (1891), "The Ancient Period of Armenian Drama" (1892), "Mkrtich Peshiktashlyan" (1892), "From the History of the Armenian Stage. Tiflis theater and domestic comedies" (1892).

In 1893, in order to popularize Armenian literature in the environment of the Russian public, Yu. Veselovsky together with M. Berberyan published the first volume of the collection entitled “Armenian novelists”, and in 1894 – the second volume entitled “Armenian novelists, playwrights and poets”. In 1898 Yu. Veselovsky’s “Poetic Translations” collection was published, which also included translations from Armenian poetry.

For his great services to Armenian literature, on January 22, 1900, the Armenian community celebrated the 10th anniversary of Yu. Veselovsky’s literary and social activities at the “Continental” Hotel in Moscow.

In 1900, the first volume of “Literary Essays” by Yu. Veselovsky was published, where he also included essays on Armenian topics: “Byron on St. Lazarus Island”, “Griboyedov and the Armenians” and others. In the extensive article “Armenian poetry of the 19th century and its origin” (1901), he examined the development of Armenian poetry from ancient times to the beginning of the 20th century. Yu. Veselovsky was also engaged in the study of the issues of Armenian historiography: he penned the study “Yeghishe Vardapet – a Literary Figure of the Heroic Age” (1901). He is the author of articles about S. Nazaryan, M. Nalbandyan, R. Patkanyan, P. Proshyan, Raffi, P. Duryan, H. Paronyan, A. Tsaturyan and others, the monograph “Armenian Poet Smbat Shahaziz” (1902). His works entitled “Corneille and the Armenians” (1902) and “Essays on Armenian Literature and Life” (1906) were created on factual material.

In 1907, under the editorship of Y. Veselovsky and G. Khalatyants, the first anthology of new Armenian poetry, “Armenian Muse”, was published.

In 1907, “Armenian muse” – the first anthology of new Armenian poetry, was published under the editorship of Yu. Veselovsky and G. Khalatyants.

From Armenian poetry, Yu. Veselovsky translated the works of M. Nalbandyan, R. Patkanyan, S. Shahaziz, G. Alishan, P. Duryan, M. Peshiktashlyan, Hovh. Tumanyan, A. Tsaturyan, Av. Isahakyan and others. Many of his translations were published in the Russian periodical press (“Вестник Европы”, “Новое обозрения”, “Армянский вестник”, etc.). The book “Russian Influence on Modern Armenian Literature” (1909) is widely known. Yu. Veselovsky devoted a number of works to the problem of the influence of Western European literature (P. Corneille, F. Schiller, V. Hugo, etc.) on Armenian literature. In 1910, the second volume of “Literary Essays” was published.

During the First World War, Yu. Veselovsky raised his protest voice in defense of the Armenian people; in 1915, the “Armenian Collection” was published in Moscow with the efforts of Veselovsky, Zhivelegov, Kara-Murza, and the booklet “The Tragedy of Turkish Armenia” was published in the same year. In 1916-1918, Veselovsky actively collaborated with the weekly newspaper “Армянский вестник” issued in Moscow, in particular, he published publicistic articles (“Children of a Miserable Country”, “Suffering Children (from the world of horrors of Turkish-Armenian reality)”, “The Fate of Armenians and the Russian Rising Generation”, “An English Tale from Armenian Life”, “The Fate of Armenians in the Imagination of an American Writer”, “At the Dawn of the Best Days”, etc.), with sincere humanity and sympathy for the long-suffering

people, exposed the Turkish government's anti-Armenian policy, touched on the issues of Armenia's social and political role, its present and future.

Having never been to Armenia, but imbued with Armenophilism, in those years Yu. Veselovsky dedicated a series of poems to Armenia and Armenians: "To the Armenians", "Armenia", "In Armenia", "To the Armenian People", "On the Ruins", "Death of Vardan Mamikoyan", "Reflections of an Armenian Detainee". In the poem "On the Eve of the New Year" (1918), the author hopes to see Armenia freed from the Turkish yoke. It is known that Yu. Veselovsky was preparing the book entitled "Armenian Question and Russian Society" for publication. Unfortunately, it did not happen; the great humanist, personifying the friendship of the Armenian and Russian peoples, instilling interest and love in Armenia and Armenian literature among the Russian public, passed away untimely at the age of 47 on April 11, 1919.

Anushavan Zakaryan – Doctor of Sciences in Philology, Editor-in-Chief of the HPHJ, Senior Researcher at the Department of Arts of the Armenian Diaspora and International Relations at the NAS RA Institute of Arts. Scientific interests: issues of the first quarter of the Armenian reality of the 20th century, the Armenian Question and the Armenian Genocide, Armenian-Russian historical-literary and cultural ties. Author of 22 monographs and collections, over 250 articles and publications. patmhandes@rambler.ru